# ԱԼՓԻԵՐԵԱՅ

## ՍԱՒՈՒՂ



ՀԱՅԿ. ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

Նուէր

Լիզպոնի Գալուստ Կիւլպէնկեան
Հիմնարկութեան կողմէ
Հայկական ՍՍՌ Գիտութիւնների
Ակադեմիայի Մատենադարանին

1966

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՍԱՒՈՒՂԱՅ

Որք միանգամ փոքր 'ի շատէ տեղեակք իցեն Եբրայեցեան ազգին պատմութեան՝ ոչ անգիտանան թէ Աստուծոյ շնորհել կամելով նոցա թագաւոր ընդդէմ կամացն Սամուէլի, բայց ըստ օրինացն Մովսէսի, (Բ Օրէնք. ժէ. 14, 15) Սաւուղ Կիսեան ընտրեցաւ 'ի նմանէ առաջին թագաւոր: Եւ օծեալ 'ի նմին Սամուէլէ հրամանաւ Տեառն, և հաճոյ եղեալ ազգին և սիրելի, արութեամբ քաջութեամբ պայծառացոյց զաշխարհ իւր, և յաղթեաց պատերազմաց այլազգեաց: Սատակեալ և զԳողիաթ հսկայ նոցա՝ մենամարտութեամբն Դաւթի, սիրեաց զպատանեակն, և փեսայացոյց 'ի դուստր իւր 'ի Մեղքող. և Յովնաթան որդին իւր պայազատ՝ ևս առաւել սիրով կապեցաւ ընդ նմա իբրև եղբայր: Բայց ապա չարակնեալ Սաւուղն ընդ փառս նորա՝ թշնամեցաւ և հալածէր. սակայն Դաւիթ ոչ միայն զպարտս որդւոյ հատուցանէր նմա, այլ և նուագօք երգոց դիւրէր տխրութեան ոգւոյն, որում տիրեալ էր չարադեւ մախանաց: Այլ 'ի զայրանալ ոխոյն՝ կարծեալ թէ քահանայքն իցեն պաշտպան Դաւթի հակառակ իւր, ետ կոտորել զնոսա. և յառաջագոյն ամբարտաւանութեամբ անունկընդիր լեալ հրամանի Տեառն ջնջելոյ զԱմաղէկ, Սամուէլի և Աստուծոյ յաչաց ելեալ էր 'ի սպառ, և անարգեալ: Վասն որոյ և ոչ ժուժկալեալ 'ի պատերազմին Գեղբուայ ընդ այլազգիսն, 'ի պարտութիւն մատնեցաւ յերեսաց նոցա. մեռան որդիք նորա 'ի մարտին, և ինքն անձին արար՝ չհանդուրժեալ ամօթոյ պարտութեանն: — Ի մէջ բազմապատիկ ողբերգութեանց Վիկտորիոսի Ալֆիէրեայ մեծանուն Իտալացւոյ, այս ընտրելագոյն համարեալ է 'ի բազմաց:

## ԱՆՁԻՆՔ

ՍԱՒՈՒՂ, Թագաւոր Իսրայէլի ․
ՅՈՎՆԱԹԱՆ, ժառանգորդի Նորա ․
ՄԵԼՔՈՂ, դուստր Սաւուղայ, կին Դաւթի ․
ԴԱՒԻԹ, փեսայ Սաւուղայ ․
ԱԲԵՆՆԵՐ, զօրավար Սաւուղայ ․
ԱՔԻՄԵԼԷՔ, քահանայապետ ․
ԶԻՆՈՒՈՐՔ իսրայէլացիք ․
ԶԻՆՈՒՈՐՔ փղշտացիք ․

Տեսարանն՝ ճամբար իսրայէլացւոց ի Գելբուէ ։

# ՀԱՆԴԻՍ ԱՌԱՋԻՆ

---

## ՏԵՍԻԼ Ա.

### ԴԱՒԻԹ.

Ահա, Աստուած ամենակալ, առնուլ կամիս յինէն ըզկայ
Ցընթացիցս՝ յոր աջ քո զիս վարեաց. եւ աստ կացից ես: —
Այս լերինք են Գելբուայ, Իսրայելի արդ բանակ,
Որ ընդդէմ կայ Ճակատեալ ամպարըշտին փղշտացւոյ:
Ո՜ տայր ինձ՝ աստ մեռանել այսօր ի սրոյ թըշնամւոյն.
Այլ այժմ՝ ի Սաւուղայ ինձ ակն ունել արժան է:
Ա՛յ անգութ անշնորհ Սաւուղ, որ զնահատակդ հալածես
Անդուլ անդադար ի քարաժայռս եւ յանձաւս:
Եւ Դաւիթ՝ էր քո երբեմն ասպար եւ յոյս անվըկանդ,
Ի պատիւ մեծ ամբարձեալ, դըստերդ ի քէն ընտրեալ այր:
Այլ վարձանըս նենգութեան հարիւրաւոր կառափունս
Խընդրեցեր ըզթըշնամեացդ, եւ քեզ կըրկին մատուցի:
Բայց Սաւուղ, քաջ նըշմարեմ, չէ մըտաց տէր ի վաղուց.
Տէր ի ձեռս այսոյ չարի մատնեաց ըզնա. եղո՜ւկ մեզ,
Զի՞նչ լիցիմք՝ յորժամ Աստուած թողուցու զմեզ ի ձեռաց:
Գիշեր ահ տուր կենարար արեգական տեղի փոյթ,
Զի գործոյ մեծի այսօր է ծագելոց նա վըկայ:
Դու Գելբուէ՝ հըռչակաւոր լիցիս յապա յաւիտեանս,
Ասասցեն, Զանձն իւր Դաւիթ աստ տայր խրոխտին Սաւուղի: —
Արի՛ եւ, Իսրայէլ, ի քո խաղաղ վըրանացդ.
Ե՛ւ, արքայ. հրաւէր այսօր առ քեզ կարդամ տեսանել՝
Ճակատուց պատերազմաց լիցի՞մ հըմուտ արուեստին.
Եւ, Փըղի՛շտ անօրէն, տես զի եւ սուրս հատանէ:

## ՏԵՍԻԼ Բ

### ՅՈՎՆԱԹԱՆ, ԴԱՒԻԹ.

ՅՈՎՆԱԹԱՆ

Զի՞նչ է ձայնս. լսեմ բարբառ որում ծանօթ է սիրտ իմ:

ԴԱՒԻԹ

Ո՞ գայցէ.. ա՛խ լուսանայր. չկամիմ թուիլ փախստեայ:

ՅՈՎՆԱԹԱՆ

Ո՞վ իցես՝ այր դու գործ զի՞նչ է քո զվրանաւս արքունի.
Օ՛ն խօսեաց:

ԴԱՒԻԹ

Յովնաթա՛ն թուի . . . հա՛պա: Ես եմ ես,
Կեցցէ Իսրայէլ, որդիդ մարտի. փղշտացին
Զիս ճարտար ճանաչէ:

ՅՈՎՆԱԹԱՆ

Զի՞նչ իցէ այս՝ զոր լսեմս.
Ո՛հ, Դաւիթ է միայն պատասխանի զայդ տալ ինձ:

ԴԱՒԻԹ

Յովնաթա՛ն . . .

ՅՈՎՆԱԹԱՆ

Ո՛վ երկինք. Դաւիթ . . եղբայր . . .

ԴԱՒԻԹ

Վա՛շ, առ քեզ . . .

ՅՈՎՆԱԹԱՆ

Եւ իցէ՞ ինչ ճշմարիտ. դու ի Գեղբուէ՞ աներկիւղ
Յերեսաց հօր իմոյ. ես վասն քո կամ ի դող:

ԴԱՒԻԹ

Եւ զի՞նչ է. զմահ ի մարտի բիւրիցս անգամ հուպ տեսեալ՝
Պինդ կացի. եւ յանիրաւ բարկութենէ հօրդ ապա

Հարուստ մի ժամանակ փախուստ առեալ խոյս տուր.
Բայցյքաջի՝ երկիւղ միայն ծըշմարիտ՝ է մահ եւեթ:
Արդ ես ոչ եւս երկընչիմ, քաւ մի՛ լիցի այդ երբեք.
Արքայ եւ ժողովուրդ իւր կան ի վտանգ աչագին,
Եւ Դաւիթ ի մայրիս դադարեսցէ յապահովս.
Մինչ դեռ սուր անթըլփատից ի գլուխս ձեր բապանայ,
Ես կենացըս փըրկութեան հոգ խընամոյ տանիցիմ:
Մեռանել եկեալ եմ, սակայն ի զէնս, ի ռազմի,
Քաջաբար, վասն հայրենեաց եւ անշնորհին Սաւուղայ՝
Որ այժմիկ բողոք բարձեալ սաստիւ ըզմահ իմ գոչէ:

ՅՈՎՆԱԹԱՆ

Ո՛վ դաւթեան արութիւն. անշուշտ ընտրեալ Տեառն ես դու:
Որ ի սիրտդ ազդէն Աստուած զաստուածեղէն զայդ իմաստ,
Ետ հրեշտակ մի քեզ յերկնից ծանապարհիդ առաջնորդ: —
Այլ ըզքեզ արդ Ե՞ըր լիցէ յանդիմանել արքային.
Ըզքեզ նա ի գումարտակըս թըշնամեաց համարի,
Կամ բարբեալ՝ըևծ ապըստամբ դաւաճանի զքեւ չըփէ:

ԴԱՒԻԹ

Հարկ առնէր նա զթըշնամիս իւր ապաստան առնել ինձ.
Այլ յորժամ զէն առնուն նոքա նըմին հակառակ,
Առնում եւ ես ընդ իւր՝ մինչեւ նըկուն լինիցին:
Ապա զհին վարձս իմ տացէ, ատելութիւն նոր, եւ մահ:

ՅՈՎՆԱԹԱՆ

Եղո՜վկ հայր. գոյ իւր պատրող, վատ եւ դըուժանն Աբեններ,
Բարեկամ սուտ ըզնովաւ կայ դարանեալ հանապազ:
Այսըն ժանտ որ զՍաւուղին կալեալ սիրտ խեղդ արկանէ,
Վայրկեանս ինչ գոնէ սուղ՝ թողու նըմա հանգըստեան,
Աբեններ ոչ դադարէ երբեք յիւրոց նենգութեանց:
Ունկն եւեթ նըմա դընէ հայրս, եւ սիրէ զնա եւեթ.
Ողջբիչ չարարուեստ՝ ըզլաւութիւն զամենայն
Որ զիւրով գուգնաքեւըն գեր ի վեր անցանէ
Զաղփաղփուն ինչ նըկարէ յաչըս նորա եւ յողդողդ.
Ինանիր ամուսինդ եւ ես ընդ իւր՝ հօր մերում...

ԴԱՒԻԹ

Ո՛վ հարան իմ, ո՛վ քաղցր անուն. հաւատարիմ իմ Մեղքող
Ո՞ր իցէ, սիրէ՞ զիս դեռ եւս յակամայս անգութ հօր:

ՅՈՎՆԱԹԱՆ

Թէ սիրէ՞ . նա՝ եւ ինքնին ի ճամբարիս է անձամբ ։

ԴԱՒԻԹ

Տեսի՛ց զինքն , ո՜վ խընդութիւն ։ Իսկ ի բանակըս զիա՞րդ . . .

ՅՈՎՆԱԹԱՆ

Գըթացաւ հայրն ինա , եւ չկամեցաւ թողուլ զինքն
Առանձինն յարքունիս անդ ի թախիծըս սըրտին .
Այլ եւ նա ինքնին , թէպէտ եւ տըրտմալից ի հոգի ,
Մըխիթար մատուցանէ նըմին ցանկորդ առ նըմա ։
Տուն մեր տուն է արտասուաց՝ յորմէ հետէ մեկնեցար ։

ԴԱՒԻԹ

Ամուսինդ իմ սիրելի , տեսիլ դիմացդ անուշակ
Ջանցելոց վիշտս ամենայն փարատեսցէ ի մըտացս ,
Եւ ըղձոգս հանդերձելոյ միասուն հատցէ ի սըրտէս ։

ՅՈՎՆԱԹԱՆ

Ո՛հ թէ զնա տեսանէիր . . . Այն ինչ ըզքեզ կորուսեալ,
Ամենայն ըսպասք զարդուց յաչացն ելին առ ցաւոց ,
Մածեալ կայ մոխիր ըզխըռուացեալ գիսակօքն ,
Եւ զայտիքն երիթացեալ՝ ողբք եւ դալուկըն տըժգոյն ,
Ցաւ անհուն անմըռունչ ի սարսռալից անդ սըրտի .
Բիւր յաւուրն անկեալ առ հայրն հեկեկելով բողոքէ ,
« Դարձո յիս զիմըս Դաւիթ , դու ինքն ետուր ինձ ըզնա ։ »
Ապա զձորձսըն պատառեալ՝ ողողանէ արտասուօք ,
Ըզհօրն աջ , մինչեւ նըմին իսկ արտասուել, եւ ո՞մ ոչ ։ —
Բայց միայն յԱբեններայ . եւ տայ հրաման անդըստին
Յոտից հօրըն քարշել հանել ըզնա կիսամահ ։

ԴԱՒԻԹ

Ո՛հ տեսիլ . ո՜վ , զի՞նչ պատմես ։

ՅՈՎՆԱԹԱՆ

Իցի՛ւ թէ չէր ճըշմարիտ ։
Ընդ անհետ լինելդ ի մէնջ՝ անհետացան եւ փառք մեր ,
Ցանկալին խաղաղութիւն , եւ ի մարտի խրախուսանք .
Արի սիրտք Իսրայելեանք ի հող մահու թաղեալ կան .

Փղշտացին՝ մանուկ երբեմն ընդ քո դրօշուքդ երեւեալ,
Արդ հըսկայ է յաչս իւրեանց, զի զքեզ չունին զօրավար.
Եւ փակեալք ի պատնիշի՝ զանձինըս մեր մոռացեալք,
Լսեմք ըսպառնալիս եւ թըշնամանս եւ այպանս:
Զի՞նչ զարմանք. պակասէ Իսրայէլի իւր սուսեր,
Եւ հանճար իմաստութեան միանգամայն, Դաւիթ իւր:
Ես ինքնին որ ըզհետ պատերազմօղ քոց հետոց
Ոչ առանց ինչ պարծանաց ընթանայի յասպարէզ,
Արդ անզօր ըզբազուկ իմ տեսանեմ ի հարուած.
Այժմ ի վտանգ խըստամբեր կենաց յինէն մեկուսի
Նըկատեալ ըզքեզ յաճախ, իմըս Դաւիթ, ոչ կարծեմ
Այլ եւս զօգ պատերազմել ի վերայ տեառն իմոյ, հօր,
Ամուսնիս եւ որդեկաց. ինձ դու յաւէտ սիրային
Քան ըզթագ արքունի, քան զհայր եւ զկին եւ զորդիս...

ԴԱՒԻԹ

Սիրեցեր զիս քան զարժանս. այսպէս Տէր զքեզ սիրեսցէ...

ՅՈՎՆԱԹԱՆ

Տէր արդար և հատուցիչ անվրէպ՝ ըստոյգ լաւութեան,
Ընդ քեզ է. դու հաճոյ Սամուէլի եղեր հիւր
Ի Հռամա՝ մինչ մեռանէր. մեծ տեսողին շուրթըն սուրբ
Որով հայրս արքայացաւ, պերճս անդ ըզքեն գուշակեաց:
Կեանք քո ինձ սըրբութիւն է եւ նոյնպէս սիրելի.
Յարքունեաց ժանտ վըտանգիցն եւեթ ըզքեւ կասկածեմ,
Ի մարտիցն՝ ոչ երբեք. իսկ զարքունի խորանօքս,
Որջացեալ կայ մատնութիւն՝ ի մահուանէ անմեկին.
Եւ ըզմահ՝ Աբեններ տայ և յըղէ առէպ Սաւուղ:
Թաքիր, ո՛հ, իմըս Դաւիթ, գոնէ մինչեւ մարտին փող
Ըզլերինս հընչեցուսցէ. այսօր կարծեմ կըռուեսցուք:

ԴԱՒԻԹ

Գործ քաջի լինիցի՞ ընաւ դաւողապէս ի ծածուկ:
Յառաջ քան զթըշնամին տեսանիցէ զիս Սաւուղ:
Ես յամօթ առնել եկի՝ ածել ըզխիստ սիրտս ի զեղջ.
Եւ յառաջ պատահել կամիմ ցասման արքային,
Եւ ապա սուսերաց սըրտմըտութեան թըշնամեացն:—
Տէր արքայ, զի՞նչ ասիցես՝ ծառայաբար թէ առ քեզ
Ըզգլուխս իմ խոնարհեմ, եւ քոյ դըստերըդ փեսայ,
Որ զանգործ մեղացս այժմիկ խընդրեմ ի քէն թողութիւն.
Ես պաշտպան քո Նախնի, որ ի ժանիս արդ մահու

Զիս ընկեր քեզ եւ ասպար եւ ողջակէզ նուիրեմ: —
Ապաքէն սուրբ Ծերունին, օրհասական ի Հռամա,
Եղեւ ինձ ասպնջական եւ խօսեցաւ հայրաբար,
Եւ մեռաւ ի մէջ գըրկացս. այլ նա երբեմն ըզՍաւուղ
Իբրեւ սիրտ որդի սիրէր. բայց վարձըս զի՞նչ ժառանգեաց: —
Ծերըն սուրբ՝ ինձ ի մահուն հաւատս եւ սէր առ արքայ
Պատուիրեաց, որպէս եւ կալ հնազանդութիւն առ Աստուած:
Ըզվերջին բանըս իւր անջընջելի դրոշմածով
Մինչեւ ի գերեզման տարայց ի սիրտ քանդակեալ:
« Ո՛վ Սաւուղ աշխարհելի, եթէ ոչ յանձնըդ դարձցիս,
» ի վերայ գըլխոյ քոյ կախեալ կայ մեծ բարկութիւն: »
Զայս ասէր ցիս Սամուէլ. այլ գոնէ քոյդ փըրկութեան
Ցանկամ, իմս Յովնաթան, յաստուածավրէժ ցասմանէն.
Եւ յուսամ թէ փըրկեսցիս, ամենեքին եւըս մեք,
Եւ ընդ մեզ՝ Սաւուղ ինքնին. զի դեռ կարէ զգաստանալ: —
Վա՜յ, թէ Տէր ի յարփեայն զհրաշէկ փայլակն արձակէ:
Գիտես դու, զի նա յաճախ ի մեծ ահեղ բարկութեան
Զարդարն եւ զամպարիշտ միահամուռ խառն եհար:
Սաստիկ, անընդհատ մըրրիկ յերկիր տապալէ,
Խըլէ եւ փըշրէ ի չէք դընէ զժանտաբեր
Տունկն եւ զմիրգս, եւ ըզծաղիկս առհասարակ եւ զտերեւս:

ՅՈՎՆԱԹԱՆ

Սաւուղայ ի պէտըս յոյժ զօրէ Դաւիթ առ Աստուած:
Իմ յաճախ տեսեալ յանուրջս ըզքեզ ի վեհ կերպարան,
Յոտըս քո խոնարհիմ. չասեմ ինչ այլ, ոչ դու ցիս:
Երդուեա՛լ քեզ աւասիկ, մինչեւ կեցեմ կենդանի՝
Մի երբէք սուր Սաւուղայ շողասցի զքեզ հարկանել:
Բայց յանարգ որոգայթից, ո՜հ Տէր, զիա՞րդ կարեմ ես . . .
Աստանօր ի սեղանս, ի խրախութիւնս, յերգոց ձայնս
Է երբեմն ըմպել յոսկի նուագս ըզմահ անիրաւ:
Աղէ ո՞ զքեզ պահեսցէ:

ԴԱՒԻԹ

Իսրայելին Տէր Աստուած,
Թէ կեցեմ ապրելոց. ոչ զօր մի մեծ, եթէ չեմ: —
Այլ ասա՛, զհարսն իմ կեցէ՞ ինձ տեսանել նախ քան զհայրն:
Անդըր չէք ինձ մուտս ունել մինչ չեւ կեցէ լուսացեալ . .

ՅՈՎՆԱԹԱՆ

Իսկ եւ նա մնայցէ՞ այգուն ի փետրալի անկողինս:

Միշտ յառաջ քան զաշալուշս ընդ իս գայ նա լաւ ըզքէն ·
Եւ յաղօթս ի միասին զհիւանդ հօրէն կամք առ Տէր : —
Ահա մերձ ինչ ըսպիտակ հարկանէ փայլ յաչըս իմ:
Թերեւս ինքն իցէ , մեկնեաց փոքր ինչ յինէն , կաց և լուր ·
Իսկ թէ այլ ոք իցէ , մի՛ երեւիր , աղաչեմ:

ԴԱՒԻԹ

Բարի է :

## ՏԵՍԻԼ Գ

### ՄԵԼՔՈԼ. ՅՈՎՆԱԹԱՆ ·

ՄԵԼՔՈԼ

Ո՛վ գիշեր անտանելի եւ անանց ,
Ձեռանե՞ս տակաւին . . . Այլ ինձ թերեւս , ո՞ գիտէ ,
Ծագեսցէ արեգակն աւետաբեր ցընծութեան.
Եղո՛ւկ զիս , որ հանապազ յանցընդելի կեամ խաւար : —
Ո՛վ եղբայր , երագագոյն այսօր զինեւ կանխեցեր ·
Եւ սակայն տաժանագոյն գըտան իմ կողք անհանգիստ :
Եւ զիա՞րդ իցէ հանգչել ինձ ի կակուղ անկողինս ,
Մինչ դեռ իմ սիրելին , գետնախըշտի , տարագիր ,
Փախըստեայ՝ յորջս ամեհի գազանաց կայ պաշարեալ:
Ո՛հ , հա՛յր անմարդասէր քան ըզգազանըս վայրի ·
Սաւո՛ւղ անագորոյն , ի դըստերէդ առնուս զայրն ,
Ըզկեանսն ոչ : — Լուր , եղբայր · ոչ եւս ես սատ մընացից ,
Եթէ գաս եւ դու 'նդ իս , գործ մի բարի գործեսցես .
Իսկ թէ ոչ , ի խընդիր նորա ելից ես միայն .
Երթալ գըտանել կամիմ զԴաւիթ , կամ ըզմահ :

ՅՈՎՆԱԹԱՆ

Յապաղեա տակաւին , եւ լռեցո՛ զարտասուս ,
Ո՛ գիտէ մերըս Դաւիթ գայցէ թերեւս ի Գելբուէ . . .

ՄԵԼՔՈԼ

Զի՞նչ խօսիս · ուր Սաւուղ է՝ եկեսցէ՞ անդըր Դաւիթ . . .

ՅՈՎՆԱԹԱՆ

Ուր Մելքոլ եւ Յովնաթան իցեն երբեք՝ յայն տեղի

ՍԱՒՈՒՂ.

Միշտ Դաւիթ յազնուական սրտէն փարեալ երթիցէ.
Չհաւատամ թէ զօրագոյն է ի նմա սէր քան զերկիւղ,
Եւ թէ այսր համարձակեալ գայցէ երբեք՝ զարմացիս:

ՄԵԼՔՈԼ

Երկինք, ո՛հ, ըղդողանի հարկանիցիմ զնմանէ,
Սակայն, տեսանել եւեթ ըղձա՛ տացէ ինձ . . .

ՅՈՎՆԱԹԱՆ

Իսկ թէ ոչ ինչ երկուցեալ՝ նա եւ ցուցցէ՞ իրաւունս
Անսովոր յանդըգնութեան եկիցն իւրոյ այսր առ մեզ: —
Ի գըժնէ բաղդին Սաւուղ ըզգօնագոյն քան յաջողն,
Արդ ընդ զօրս իւր սըրտաբեկ կայ վըհերոտ, գիտես զայն.
Եթէ այժմ անպարտելի բազուկ Դաւթի ոչ հորդէ
Առաջի իւր ճանապարհ ընդ գումարտակս ոսոխին,
Անվստահ է Սաւուղ, սակայն լուռ կայ սիգապանծ:
Ամենայն ոք ի մէնջ յիրեւ նորա 'նթեանու քաջ,
Եթէ ոչ գոյ յաղթութեան յոյս ի սըրտի անդ իւրում:
Թերեւս արդ ի դէպ ժամու տեսանիցէ զփեսայ քո:

ՄԵԼՔՈԼ

Թերեւս այդպէս ինչ իցէ. բայց նա հեռի է, եւ ո՞ր . . .
Եւ յորում պայմանի . . ո՛հ . . .

ՅՈՎՆԱԹԱՆ

Քան զոր կարծեան առաւել
Կայ նա քեզ մօտաւոր:

ՄԵԼՔՈԼ

Ո՛հ, երկինք, զի՞ փաղաքշես:

## ՏԵՍԻԼ Դ

### ԴԱՒԻԹ, ՄԵԼՔՈԼ, ՅՈՎՆԱԹԱՆ.

ԴԱՒԻԹ

Աստ է քեզ փեսայդ:

ՄԵԼՔՈԼ

Ո՜վ ձայն, ո՜վ տեսիլ, ո՜վ խընդութիւն . . .

Ոչ կարեմ բարբառել . . ո՜ սքանչելիք . . . եւ իցեմ . . .
Ի գիրկս իմ Ճշմարտի . . .

ԴԱՒԻԹ

Ո՛վ Հարան , ով խիստ անջատումն . . .
Մահ , թէ քեզ պատահեցայց այսօր , սակայն ընդ իմս եմ
Լաւ է մահ , քան վայրենի կեանս յանապատըս վարել .
Ոչ ումեք սիրելի , ոչ զումեքէ ի քէն փոյթ :
Ծարաւի սուր Սաւուղայ , քեզ ակն ունիմ , հա՛ր զիս արդ .
Փակեսցին աչքս աստ գոնէ՝ ի յորդագութ կընոջէս ,
Յօրինեալ ծածկեալ ոսկերքս եւ թացեալ սերտ արտասուօք :

ՄԵԼՔՈԼ

Ո՛հ , Դաւիթ , դու սկիզբն եւ կէտ իմոյ յուսոյս ամենայն .
Եղիցի գալուստ քո ինձ ի զուարթարար բերկրութիւն :
Որ զքեզ յայնչափ ի ծանրը վտանգիցն ապրեցոյց
Աստուած ոչ անէ զքեզ մյսր՝ այսօր առ մեզ վայրապար . . .
Տեսիլ քո յիս եւեթ՝ զո՞ր զօրութիւն չըզգեցոյց :
Դողայի զքէն ի հեռուստ , այժմիկ գոգցես չերկընչիմ . .
Սակայն զի՞նչ տեսանեմ , յո՞ր վայրենի վերարկու
Թուարծի զքեզ ցուցանէ ինձ առաւօտըն ծագեալ :
Ո՛վ քաջդ իմ , դու յամենայն զարդուցըդ քոց մերկ շրջիս .
Ոչ պատի զքեւ զոր ձեռամբ իմով անկի քեզ երբեմն
Ոսկեհուռըն ծիրանին : Ո՞վ ի խորթնի յայդ խարուանս
Կարացէ ասել երբեք թագաւորի զքեզ փեսայ :
Եւ ի զրահըդ՝ դուզնաքեայ թըւիս մարտիկ , ոչինչ այլ :

ԴԱՒԻԹ

Ի բանակս եմք աստանօր , ոչ յանարի արքունիս .
Աստ խոշոր տառատոկ եւ սուսեր քաջ յեսանեալ
Պանծալոյն են պերճանք . այսօր նորոգ ծիրանի
Յարեան փղշտացւոց կամիմ վասն իմ ներկանել :
Արդ դու 'նդ իս վստահ լիջիր յԻսրայելին մեծ Աստուած ,
Որ փրկէն զիս ի սրոյ , եթէ չիցեմ մահու պարտ :

ՅՈՎՆԱԹԱՆ

Այդ ահա եղեւ ի լի . մի եւս յամել կարծեմ աստ :
Դու թէպէտ ի դէպ հասեր . ըզգուշութիւն պիտի մեծ :—
Սովոր եմք , այգուն այգուն գնալ այցելել զհայրն յայս ժամ .
Դէտ կացցուք՝ այսօր զհա՛րդ վարէ զնա իւր ժանտութիւն .
Եւ թէ զուարթք իցեն օդք՝ պատրաստեսցուք մեք ըզնա

ՍԱՒՈՒՂ

Ի քո անսութիւն, միանգամայն պահ գիտուք՝
Զի քան զմեզ մի ոք կանխեալ քըսեսցէ չար ինչ զեկիցդ :
Արդ այժմ երթ. գուցէ ուրուք զքեզ ծանուցեալ մատնեսցէ.
Արեններ կարող խակ է եւ տալ ըզքեզ սպանանել:
Զպահպանակ գիմացդ իջո՛, երթ ի զարթուն զօրացն մօտ
Եւ անտես մնա դարձիս առ քեզ կամ զոք յղեսցես . . .

ՄԵԼՔՈԼ

Ի մարտկաց խըռան զիա՞րդ թաքիցէ խոյս Դաւիթ.
Ո՞ր այն աչք քան զիւրն արտաքս բատ գըլխանոցն ասալիցի,
Ո՞ր սուսեր՝ նըման իւրումն. ո՞վ զոյգ ի զէնս որոտայ :
Ոչ, ոչ սէր իմ քաղցրիկ. լաւ եւս իցէ թաքչել քեզ,
Մինչեւ դարձ առնիցեմ առ քեզ, եղո՛ւկ թըշուառիս.
Հազիւ այն ինչ դըտեալ ըզքեզ՝ հարկիմ լըքանել.
Բայց առ ժամ մի սուղ եւեթ. ոչ եւս ապա զքեզ թողից :
Արդ կամիմ նախ ըզքեզ յապահովի տեսանել:
Տես աղէ ի խորս անդ ծըմակնիսա անտառիդ,
Ընդ աջմէ կողմանէ լայնատարած մի քարայր :
Իմ բուռեալ մնացեալ անդր ի բնաւին աշխարհէ՝
Զքեզ կարդամ, ըզքեն խորհիմ, առ քեզ յօգոց ելանեմ,
Եւ ցընդեմ զապառաժ վիմօքն ըղդաւն արտասուս.
Անդ թաքիր, մինչեւ հասցէ քեզ ժամանակ յայտնելոյ :

ԴԱՒԻԹ

Կամիմ զքեզ հաճել ի սպառ, ով հարսն. երթայք անկասկած.
Են յիս միտք, ոչինչ գործեմ վարկպարազի, սիրեմ զձեզ,
Զեզ զանձն իմ պահպանեմ. յԱստուած միայն յուսացեալ:

# ՀԱՆԴԷՍ ԵՐԿՐՈՐԴ

---

## ՏԵՍԻԼ Ա

### ՍԱՒՈՒՂ, ԱԲԵՆՆԵՐ·

ՍԱՒՈՒՂ

*Գեղեցիկ է առաւօտս. յարփիներանգ պատմուճան*
*Ոչ ծագէ արեւն այսօր, աւետէ տիւ երջանիկ: —*
*Ո՛վ աւուրք իմ գնացեալք, ո՛հ ո՞ւր իցէք դուք այսօր:*
*Սաւուղի չէք յարուցեալ յիւր խըշտեկացն ի ճամբար՝*
*Եւ ոչ լեալ քաջայոյս դառնալ նընջել յաղթական:*

ԱԲԵՆՆԵՐ

*Արդ արքայ, զի՞ վեհերիս. ո՞չ ապաքէն դու էիր,*
*Որ զեղջերուըն փղշտացի փոքր ինչ յառաջ ջաղխեցեր:*
*Որչափ յայս մարտ յապաղեմք, զայս քեզ ասէ Աբեններ,*
*Այնչափ լի եւ շըքեղ տարցիս ի գլուխ յաղթութիւն:*

ՍԱՒՈՒՂ

*Աբեններ, քանիցս այլազգագոյն զմարդկան իրս*
*Ի քըննել մանուկ հասակ քան զալեւոր նըշմարէ:*
*Ես ինքնին հաստաբազուկ մինչ ծօծէի զյաղթ նիզակ,*
*Զոր զորդիս հազիւ բառնամ, ոչ գիտէի երկբայել.*
*Իսկ այժմ ոչ ըզմանկութիւն եւեթ է իմ կորուսեալ,*
*Այլ իցիւ թէ 'նդ իս լինէր զօրութեանց Տեառն աջ անյաղթ,*
*Կամ ընդ իս գոնէ գոյր քաջամարտիկն իմ Դաւիթ:*

ԱԲԵՆՆԵՐ

*Իսկ մեք զի՞նչ իցեմք. առանց նորա չկանգնի՞ յաղթութիւն:*
*Թէ ի դոյն էի կարծիս, ոչ եւս այլ սուր մերկանալ*

կամէի, բայց թէ միայն ի հարկանել զիս յոգի:
Դաւիթ, որ նա միայն է աղետից քոց պատճառք . . .

ՍԱՒՈՒՂ.

Ո՛հ, ո՛չ. յայլ սոսկալի ականէ գան իմ չարիք.
Եւ զի՞նչ. թաքուցանե՞լ կամիս յինէն զիրացս ահ:
Թէ չէի հայր որպէս եմս, ո՛հ, եւ որդւոց սիրելեաց,
Այժմ ըզթագս եւ զյաղթութիւն եւ զկեանս անձին խնդրէի՞:
Զիս վաղուց ընկենուի յատելեաց սուր գահավէժ,
Այսգունակ հատանէի զսոսկալի կեանսըն զոր կեամ:
Այս քանի՞ ամք իցեն արդ, զի յաչս իմ ծաղը ոչ տեսաւ:
Որդեակքն իմ սիրամունդք, եթէ երբեք գգուեն զիս,
Բազում այն է զի շարժեն ի բարկութիւն ըզսիրտ իմ:
Միշտ դաժան, դառնահոգի, ժանտատեսիլ, սըրտմըտեալ,
Յամենայն ժամ ընդ անձին ծանրատաղտուկ, եւ ընդ այլս.
Մարտ խնդրեմ ի հաշտութեան, եւ ի մարտի հաշտութիւն,
Յամենայն ի բաժակս ըմպեմ թաքուն մահադեղ.
Յամենայն ի սիրելիս տեսանեմ զոք թշնամի,
Փափկագոյն ատրեսատան օթոցք ի կողս են թաւ փուշք,
Սուղ ինչ քունըն տառապանք, անուրջք՝ տեսիլ արհաւրաց:
Զի՞նչ եւս այլ. ո՞ կարծիցէ. սոսկումն է ինձ մարտին փող,
Սարսափ ահագին են Սաւուղի չեփորայք:
Տես թէ արդ տուն Սաւուղայ ի նըշուլիցն այրեցաւ,
Տես թէ Տէր ընդ իս իցէ: Եւ դու ինքնին, գիտես քաջ,
Մերթ թուիս ինձ՝ որպէս եսդ՝ ազդ ջերմ եւ սերտ բարեկամ,
Զօրավար քաջակորով՝ փառաց իմոց պահպանակ.
Մերթ անարգ կերպարանեալ պաշտօնատար արքունեաց,
Զարկնող եւ խորամանգ դարանակալ դաւաճան:

ԱԲԵՆՆԵՐ

Արդ, Սաւուղ, քանզի միսք քո կատարեալ առ քեզ են,
Օ՛ն առեալ յիշեսջիր զանցեալսըն քո զամենայն:
Ամենայն աղմուկ սըրտիդ, — զայդ միթէ ո՞չ տեսանես, —
Ի տանէ անտի Հռամայ մարգարէիցն ելանէ:
Ո՞վ յառաջ իշխեաց առել քեզ. Մեկնեցաւ ի քէն Տէր.
Ծըպիրհ ծերն այն ժահադեմ՝ վէս ղեւտացին Սամուէլ,
Ում անդրէն ձայն կըրկնէին խուժանն նորա կեղծաւոր:
Նա ի գլուխ քո՝ կապուտակ ականողեօք տեսանէր
Փայլակնեալ զարքունական խոյրըն՝ զոր իւր գըրէր նա.
Ի սպիտակ հերսըն վաղուց կըրէր դոգ զայն բոլորեալ.
Եւ ահաձժողովրդեանն Իսրայելի միաբան

Բարձրաշուք հրաման կամաց յօդըս ցընդեաց զիղձըս իւր ,
Եւ ընտրեալ կացոյց իւր գլուխ՝ պատերազմող Թագաւոր :
Այս միայն են այս քո մեղք . ուստի եւ նա դադարեաց
Անուանել այնուհետեւ ըզքեզ ընտրեալ Աստուծոյ ,
Իսկ եւ իսկ իբրեւ դու ելեր ըստ ձեռըն նորա :
Ի սկըզբան այս եւեթ խռովէր ըզքո զգայարանդ ,
Ապա զգործն յանգ հան Դաւիթ հոգեհընչող բարբառովն :
Նա ի զէնս էր քաջարի , զայդ ոչ երբեք ժըխտեմ ես ,
Այլ ծառայ Սամուէլի կամակատար էր նա միշտ ,
Ի սեղանն յօժարափոյթ քան ի ճամբար ճակատուց ,
Բազկաւ գոռ պատերազմող , սակայն սըրտիւ՝ քահանայ :
Մերկացի զճըշմարտութիւն ի սուտ զարդուց , տես զըստոյգն .
Ես ծընունդ եմ քում արեանդ . ճաճանչ փառացդ ամենայն՝
Է շողիւն Աբեններեայ . իսկ բարձրանալ չիք Դաւթի ,
Ոչ երբեք , եթէ ոչ նախ դիցէ զՍաւուղ ոտնակոխ :

ՍԱՒՈՒՂ

Դաւիթ . . . Առեամ ըզնա . . . Այլ զհարազատ դուստրըն իմ
Եմի կին տըւեալ նըմա . . . Եղո՛ւկ , դու չես ինչ տեղեակ : —
Զայնըն այն իշխանաձայն՝ որ գիշերի գիշերի
Կոչեաց զիս ի մանկութեանս՝ մինչ սոսկացոյն էի ոք ,
Աններշան , յինէն հեռի գաղն եւ խորհուրդք իւր ըննաւ ,
Արդ նոյն ձայն զբազում գիշերս ահեղագոչ վանէ զիս ,
Եւ ի գոռ կոհակակոծ մըրնչող ալեաց որոտայ .
« Ե՛ւ Սաւուղ , ե՛ւ Սաւուղ . . » մարգարէին տեսիլ սուրբ՝
Զոր տեսի յանուրջս երբեմըն մեծարոյ կերպարան՝
Զեւ ցուցեալ առ յԱստուծոյ՝ Իսրայէլի զիս արքայ ,
Այժմ ըզնոյն Սամուէլ՝ յայլ իմըն դէմս յերազիմ .
Ես յահեղ ինչ խորաձոր , ինքն յարփենի լեառն ի նիստ ,
Դաւիթ յոտըս իւր ի ծունր , եւ սըրբանուէր ծերունին
Զիւղըն Տեառն ի գլուխն հեղոյր , համայն միւռոնն ձեռամբ
Մեծամեծ հարիւրաւոր կանգունս յիմ գլուխ երկայնեալ ,
Շոպեալ զԹագն յիմ վարսից՝ կամէր զԴաւթին պըսակել :
Հաւատա՞ս . անկեալ Դաւթի խնամոտ գըթովք ի խոնարհ ,
Զառնոյր յանձըն , լայր գոչէր եւ ակնարկէր տալ յիմ գլուխ . —
Ո՛վ տեսիլ . իմըս Դաւիթ , հնազանդ ուրեմն ես դեռ ինձ ,
Դեռ եւս հօր իմ եւ որդի , սերտ հըպատակ , բարեկամ :
Ո՛հ , զպըրուցք . ըզպըսակս յափըշտակե՞լ ի գըլխոյս .
Յանդըգնեալ ի դոյն՝ դողա ծեր անօրէն . ո՞վ ես դու . . .
Եւ որ այլ զխորհուրդըդ զայդ ած ըզմըտաւ՝ կորիցէ : —
Ո՛հ , եղո՛ւկ հիքացելոյս , զի աւասիկ զատանցեալն

1000

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ... ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱԲԵՆՆԵՐ

Կորիցէ Դաւիթ եւեթ, եւ ընդ նմա ցընդեսցին
Երազք, թըշուառութիւնք, տեսիլք եւ բնաւ արհաւիրք:

## ՏԵՍԻԼ Բ

### ՅՈՎՆԱԹԱՆ, ՄԵԼՔՈՂ, ՍԱՒՈՒՂ, ԱԲԵՆՆԵՐ.

ՅՈՎՆԱԹԱՆ

Ողջոյն տեառնըդ արքայի:

ՄԵԼՔՈՂ

Եւ Տէր ընդ հօրըդ մերում:

ՍԱՒՈՒՂ

. . . Հանապազ ընդ իս են ցաւք: — Այսօր յարեայ կանխագոյն
Խրախամիտ զուարթ յուսով: Այլ աւասիկ ամենայն
Սպառըսպուռ իբրեւ ըզմեգ անապատի կորեաւ յոյս: —
Զի՞նչ օգուտ արդ, ո՛վ որդեակ, առնել ըզկռիւն օր ի յօր:
Կասկածանք կոտորածի քան զխորտակումն եւս է չար.
Գամ մի թող հասցէ մեզ այն. կամիմ այսօր տալ ճակատ:

ՅՈՎՆԱԹԱՆ

Եւ այսօր յաղթեսցուք. ո՜ն հայր դարձիր ի խրախոյս.
Յոյս քան զայս իրաւացի երբեք ի քեզ ոչ զարթեաւ:
Լըրջացո՛ զերեսըս քո. է յաղթութիւն ի սըրտիս:
Թըռչնամեաց դիակամբք ծածկեսցի այս դաշտավայր,
Թեւաւոր հինավանդից[1] թողցուք պարէն ահաւոր:

ՄԵԼՔՈՂ

Յօթեւան անդորր, ո՛վ հայր, դարձցուք ընդ հուպ յարքունիս.
Ի պըսակս յաղթանակացդ յայնժամ բազմեալ զուարթագին,
Հաճեսցիս դարձուցանել ի կեանս անդրէն զդուստրն քո՛
Զամայի եւ զորդոմագին, դարձուցեալ զայր իւր ի նա, . .

---

1 Այս է յափշտակիչ հաւուց կերակուր զմարմինս թշնամեաց:

ՍԱՒՈՒՂ

Իսկ զի՞արդ. յարտասուաց ո՛չ դադարես դու երբեք:
Ա՞յդ լիցին քաղցրութիւնք ի զուարթ առնել Սաւուղի
Ըզխոնջ միտսն եւ զխամուր. այդ քո սփոփումն է ցաւոցս:
Արտասուա՛ց դու դուստր ես, Թո՛յլ արա ինձ, ի բա՛ց կաց:

ՄԵՂՔՈՂ

Աւա՜ղ ինձ. ո՛չ կամիցիս, ո՛վ հայր, լալ ինձ, և ո՞, հայր...
Ո՞վ զօգնս արտասուայեղց յողես համակէ, քան Թէ դու:

ՅՈՎՆԱԹԱՆ

Լո՛ւռ լեր, ե՛հ. հօր տաղտկութիւն խնդրես լինել դըժպըհի:—
Խընդա՛, հայր. մարտից ի ընիս շընչէ սիք քաղցր եւ յաղթից.
Ընդ այգուս էջ յերկնուստ պատերազմիկ ոք Զուարթուն,
Որ այսօր ընդ ամենայն իսրայէլ ծախր առնուցու:
Եւ ի քո սիրտ նոյնհետայն հարցի խրախոյս յաղթութեան:

ՍԱՒՈՒՂ

Զիս անմիտ ուրախութեանդ հաղո՞րդ լինել կամիս, զի՞ս.
Զի՞նչ յաղթումն, ո՞ր այն Զուարթուն. առհասարակ ողբս առէք.
Հինաւուրց կաղնին ուր ոստըս բարձրուղէշս արձակէր,
Կանգնեցաւ զօրախրատեսիլ արմատըս իւր անդանոր:
Ամենայն ինչ արտասուք, արիւն եւ մահ եւ մըրրիկ.
Պատմուճանք պատառեսցին, յանարգ մոխիր լցցին հերք.
Օրս այս է կատարածի, վերջին է մեզ անշուշտ այս:

ԱԲԵՆՆԵՐ

Ասացի ձեզ շատ անգամ, տեսիլ ձեր ծանր առ նըմա՝
Ցամենայն ժամ յաւելու ի դըժընդակ վիշտըս իւր:

ՄԵՂՔՈՂ

Իսկ արդ զի՞նչ. ընդ վա՞յր հարցուք ըզսիրելին մեր ըզհայր:

ՅՈՎՆԱԹԱՆ

Քե՞զ միայն կամիս առ իւր կալ, ուր մատնեակդ արկանել...

ՍԱՒՈՒՂ

Զի՞նչ լիցէ. յերեսս որդւոց իմոց զայրո՞յթ խոժոռել.

Ո՞ գնոսա թշնամանէ . միթէ դու ինքն , Աբեններ
Գոքա իմ են արիւն . ո՛չ գիտես , լո՛ւռ լեր . յիշեա :

ՅՈՎՆԱԹԱՆ

Մեք արիւն քո եմք , եւ քեզ զարիւնըս մեր տալ պատրաստք :

ՄԵԼՔՈՂ

Ի հայցելըն զայր իմ , հա՛յր , միթէ զհաճոյս իմ խընդրեմ .
Ըզպաշտպանըդ քո քաջ , զԻսրայելըն ախոյեան ,
Զահըն մեծ հիազարհուր ըզփըղշտացւոցըն խընդրեմ :
Ի տաղտուկ ցնորից քո ժամս , ի մահահոտ քո խորհուրդս՝
Ո՞չ Դաւիթ էր ապաքէն որ երկնաւոր նըւագօք
Դիւրէր քեզ . եւ արդ ասա՛ , ի խաւարիդ չէ՞ր նա լոյս :

ՅՈՎՆԱԹԱՆ

Նա եւ ես՝ սուր թէ յազդեր կապիցեմ՝՝ քա՛ջ գիտես դու ,
Բայց ո՞ւր է իմ սուսեր , քաջահընչող եթէ քայլք
Հըզօրին նահատակաց՝ չիցեն ճեմոցս առաջնորդ :
Թէ Դաւիթ աստ էր՝ զի՞նչ խօսք մարտին , լինէր յաղթութիւն :

ՍԱՒՈՒՂ

Ո՛վ աւուրք իմ առաջինք , զըւարթ շըքեղ ամք յաղթօղք :
Ահա իմ մեծ յաղթանակք խումբ առեալ գան զառաջեաւս :
Ի ռազմըն գամ , ի փոշի փառապարգեւ թաթաւեալ
Եւ յարիւն եւ յապաժոյժ , յոնչունչ խրոխտանսըն շըրջիմ [1] :
Գոհութիւն Աստուծոյ . . . Ես , Աստուծոյ . . . զի՞նչ ասեմ : —
Երկաթի են Տեառն ականջք ի ձայնս , եւ շուրթն իմ լռին :
Ո՞ւր են փառքս , ո՞ւր է արիւն զիակնացեալ թըշնամեացս :

ՅՈՎՆԱԹԱՆ

Զամենայն տայր քեզ Դաւիթ :

ՄԵԼՔՈՂ

Այլ ո՛չ ընդ քեզ է Դաւիթ .
Յերեսաց քոց մերժեցեր դու զնա , ի մահ խընդրէիր .
ԸզԴաւիթ զորդին քո , զգեղեցկագոյնըդ քո գործ ,
Ըզհըլուն զայն եւ զհամեստ , եւ քան զփայլակըն սրաթեւ
Առ ի քեզ հնազանդել , եւ ի քո սէր՝ ջերմեռանդն
Առաւել քան ըզքուն որդեակըս քո : Թո՛յլ տուր , հա՛յր . . .

---

1 Իմա ի մէջ խրոխտացեալ թշնամեացն անշնչացելոց իմով յաղթութեամբս :

ՍԱՒՈՒՂ

Արտօսր յաչս իմ պղպղջայ · յանսովոր ողբ ո՜ սուլայէ.
Ո՛հ, անթաց եւ ցամաքուտ զարտեւանունս իմ թողէք :

ԱԲԵՆՆԵՐ

Լաւ իցէ քեզ, տէր արքայ, ի քո խորանսդ մեկնել:
Ի մօտոյ քեզ կազմ ի ռազմ ըզգօրդ ցուցից ճակատեալ:
Եկ արդ եկ, եւ դիր ի մտի թէ բնաւ ինչ չէք ի Դաւիթ . . .

## ՏԵՍԻԼ Գ

ԴԱՒԻԹ, ՍԱՒՈՒՂ, ԱԲԵՆՆԵՐ, ՅՈՎՆԱԹԱՆ, ՄԵԼՔՈԼ.

ԴԱՒԻԹ

Բայց միայն անմեղութիւն :

ՍԱՒՈՒՂ

Զի՞նչ տեսանեմ :

ՄԵԼՔՈԼ

Ո՛վ երկինք :

ՅՈՎՆԱԹԱՆ

Զի՞ գործեցեր :

ԱԲԵՆՆԵՐ

Յանդո՛ւգն . . .

ՅՈՎՆԱԹԱՆ

Ո՛վ հայր . . .

ՄԵԼՔՈԼ

Հայր, իմ է այր, դու ետուր :

## ՍԱՒՈՒՂ.

Ո՛վ տեսիլ:

ԴԱՒԻԹ

Տէր իմ արքայ, դու զայս գըլուխըս խընդրես.
Որոնես զայն ի վաղուց, ահաւիկ է. հա՛ռ ըզնա:

ՍԱՒՈՒՂ

Զի՞նչ լսեմ. . Դաւիթ . . Դաւիթ, ի քեզ Աստուած ոք խօսի,
Աստուած ոմն այսօր ըզքեզ ածէ այսր առ իս . . .

ԴԱՒԻԹ

Այո՛, տէր իմ թագաւոր, այն որ միայն է Աստուած,
Որ յԵլա՛ զերկչոտըս զիս մանուկ անփորձ տակաւին՝
Դըրդեր ի ճակատ ամբարտաւան խրոխտութեան
Սկայազոր Գողիաթուն՝ կարծրածածկոյթ վառելոյ.
Այն Աստուած՝ որ յահեղ զէնըդ քո պըսակ ի պսակ դէզ.
Որ ի միշտ անքընին խորհուրդըս իւր եւ յանհաս՝
Հաճեցաւ զիմ հէք բազուկ ի լուսափառ գործս առնուլ.
Արդ այո՛ նոյն Տէր ածէ զիս քեզ հանդերձ յաղթութեամբ:
Արդ որ զի՞նչ եւ կամիս զիս, ընկա՛լ զինուոր՝ թէ սալար,
Թէ լցեմ այդմ արժանի: Թող նախ անկցի թըշնամին.
Ի շընչել հիւսիսակի՝ փարատեսցին թուխ ամպրոպք
Ըզքոյով գահոյից շուրջանակի կուտակեալք.
Ապա զայն, ո՛վ Սաւուղ, իմով մահուամբս հատուցես.
Յայնժամ ոչ քայլ մի ոտին, ոչ հոգ հասցէ քեզ մահուս.
Ասասցես, Մեռցի Դաւիթ. եւ Աբեններ սպանցէ զիս: —
Ոչ առից՝ ոչ սուսեր եւ ոչ ասպար ես զանձամբ.
Յարքունիս բուն տեառն իմոյ՝ ինձ ոչ մի զէն վայելէ,
Եթէ ոչ համբերութիւն, խոնարհութիւն, աղաչանք,
Սէր հանդերձ անմեղութեամբ: Եթէ լցէ Տեառն հաճոյ.
Ոչ մեռայց ես իբրեւ քո՛ հակառակորդ, այլ որդի:
Եւ որդեակն այն առաջնոյ ժողովրդեան մերոյ հօր,
Ի մեծի անդ լերին պատրաստ էր տալ զարիւն իւր,
Ոչ բարբառ անդ՝ բայց միայն հնազանդութեան, ոչ նըշմար.
Բարձրացեալ մինչդեռ մի ձեռն ի խողխողել կայր ըզնա,
Նա զմիւս ձեռնըն հայրական ողջագուրեալ համբուրէր: —
Ինձ Սաւուղ ետ զէնութիւնս, առնու յինէն զայն Սաւուղ.
Իմ նովաւ հընչէր անուն, կորուսանէ արդ նա զայն.
Ինքըն զիս մեծ արար, նոյն ինքն առնէ զիս յոչինչ:

### ՍԱՒՈՒՂ

Այդ բարբառ զխիտ մառախուղ զառամս աչաց պատառէ.
Ո՛հ ի սիրտ իմ քաղցր աւաչ: Խօսք քո, Դաւիթ, քաջի խօսք.
Եւ դու ինքըն քաջ էիր, այլ վհատութեամբ կուրացեալ
Զիս խոտել յաւակնեցար, եւ վերանալ իսկ զինեւ.
Զգովութիւնս իմ գողանալ եւ ըզգենուլ ըզլոյս իմ:
Թէ եւ քո չէի արքայ, Նոր զինուորի վայելէ՞
Զալեւորն արհամարհել ըզհին աւուրց զօրական:
Դու մեծանձն յամենայնի, յայսմ այնպիսի ոչ գըտար.
Երգէին ըզքէն դըստերք Իսրայէլի պարուըք.
« Դաւիթ քաջ զհազարս եհար, Սաւուղ հարիւրս միայն »:
Ո՛հ, Դաւիթ, մեղա՛ր յիս, հարեր յոգիս կարեվէր
Ընդէ՞ր ոչ ասէիր. « Սաւուղ ի տիս իւր դալար՝
» Հարկանէր ըզհազարս հազարաց՝ Թո՛ղ Թէ զհազարս.
» Նա է քաջ պատերազմող, նա զիս արար՝ որ ինչ եմս »:

### ԴԱՒԻԹ

Ասէի ես զայդ, այլ սա՝ կալեալ զփականս ականջացդ,
Ուժգնագոյն գոչէր. « Հըզօր է նա ի վեր քան ըզչափ,
» Դաւիթ՝ յամենեցուն բերանս, յոգունց ի սըրտի.
» Եթէ ոչ դու զնա սպանցես, Սաւուղ, ո՞ զնա սանձեսցէ: » —
Նուազագոյն նենգանօք եւ կարի յոյժ ճըշմարտիւ,
Աբեններ, զի՞ չասէիր ցարքայ. « Դաւիթ վեհ քան զիս,
» Յայն աղագս ատեամ, խանտամ, խիթամ, կամիմ սպանանել »:

### ԱԲԵՆՆԵՐ

Վիրա՛գ չար, իսկ որ օր գաղտագողի երթայիր
Քոյով մարգարէիւքդ ի շըշընջել ըզխորհուրդս,
Եւ մինչ լարս անօրէն՝ գաղտուկ յարքայդ ձըգեցեր,
Եւ ի գիրկըս փղըշտացւոց յորժամ եղերն ապաստան,
Եւ առ պիղծ Թըշնամեան աւուրս հանեալ գարշելեաց՝
Եւ ի մէջ մեր պահէիր ծածուկ կըրօնս հանապազ.
Արդ ես զայդ ասացի՞ երբեք, կամ դու չարարե՞ր:
Ո՞ քան զիս յառաջն ըզքեզ ետ յակն առնուլ արքայի,
Ո՞ չարժեաց առնել ըզքեզ փեսայ. միայն Աբեններ:

### ՄԵԼՔՈՂ

Ես միայն, ես ընկալայ զԴաւիթ փեսայ ի հօրէս.
Ընտրեցի զնա՝ պակշոտեալ ի լաւութիւնս նորին:

Նա էր իմ անձն առաջին, Թագաւն խրախոյս եւ յոյս իմ.
Նա իմ կենաց միայն. ի սրտէս անդամ՝ պոկեալ պայմանի
Եւ անկեալ ի հիւանդութիւն, մեռաւ եւ յաղթեաց ինձ Դաւիթ
Առաւել հաճոյագոյն իմեւմ սրտիս գտանէր
Քան ըղձեալ մեծ թագաւորս զոր պաշտեն արեւելք.

ՍԱՒՈՒՂ.

Այլ սակայն դու Դաւիթ կարես մխիթարել կամ՝ ջերմն
Ձայնատամանս Աղեղնեկաց, եկ արդ առնեմ առ զիս.
Ո՞չ դու զփղձկութիւն սրտիս քով ապաքէն,
Ո՞չ որոյ աղերսա հեռացեր յանձանէ իմ արկեր,
Եւ կենաց եւս արգելի, հօր քում առեմ երկերորդ,
Ո՞չ արդեօք բազում անգամ դարմանեալ եղեր դու.

ԴԱՒԻԹ

Արդ ընդ իմ պատասխանի աշխատանաց արարչէ
Այս երգեմքն գրոչակ աղբայեկան բըղխի քու.
Ճանաչես դու զայս. աղէ՛ ա՛ռ ի ձեռին քում, լըննէս.

ՍԱՒՈՒՂ.

Տուր զիս. զի՞նչ տեսանեմ. այս իմ է. ո՞ր զգայեր.

ԴԱՒԻԹ

Ի թիկանց քոց ի բուկէց եւ այսու արգեալս հասի.
Յերկնէն գնդապահս. զի անդ դու զիս առաքէր
Վարէիր փայլենաբար հարուածական մինչ ի մահ.
Անդ էի եւ անձնիկեր փախըստական յանձնութին՝
Որ յարգերն անուն կոչի. անդ դու միայն մնացեր,
Ըզքո բանակ թողեալ ի պահ զզուն խրամատիդ՝
Ի կախս անկողնոս յանգորրաւէս հանգըստեան
Փակէիր զաչսդ ի քուն. ո՛հ երկինք, դու զնոյն մահու.
Էի սրտեամբ ի հալածոյ եւ սպառնեամբ ներձեցեր.
Տես զի Տէր առանձնակաւ զմարդկան խորհուրդս առնէ ծաղր,
Ըստ կամի կարող էի անդէն ըղքեզ սպանանել,
Եւ փրկել զիս ընդ այլ եւս. այլ իմ կարող էի եւ.
Վրիժէ քեզ զայդ սրասն քոյ հանդերձից հատանէս.
Անդ դու մեծ, դու թագաւոր, ապաստանեալ ի զանձդ սերձ,
Այլ աշա ի ձեռս անարգ փառաւորեալ պատանւոյ . . .
Արենաբեր բաջակորով ո՞ր էր յաղթեալ, ո՞ր արդեօք.
Ա՞յսպէս կենաց քո պահապանն, ո՞յս արդարեւ հոգւոյ սպաս.
Տես թէ յիս եւ յսալեալ, եւ զորդւոյթեան յերջեալ յիս.—

Արդ դու գո՛հ իցես, Սաւուղ. արդ չունիցիս ի ձեռին
Ըզյաղթանի նըշան սրբոյն, անձկութեան, հաւատոյ.
Ըզհանդէս անուր սրբոյ, զզօրաւոր միութեան,
Եւ փենդոս պահպանութեան Աբեններին սրբոյն:

ՍԱՒՈՒՂ.

Որդեակ իմ՛ յաղթեցեր, դու յաղթեցեր: Աբեններ,
Դու կաց եւ հայեաց, եւ պատանձեալ կարկեաչիր:

ՄԵՂՔՈՂ.

Ո՛վ ցնծութիւն.

ԴԱՒԻԹ

Ո՛վ հայր . . .

ՅՈՎՆԱԹԱՆ

Ո՛հ որ յաջող.

ՄԵՂՔՈՂ.

Ո՛հ փառաց:

ՍԱՒՈՒՂ.

Արդարեւ որ ցնծութեան եւ յաղթութեան է այսօր.
Այսօր զքեզ կամիմ՛ մարտին իշխան ի գլուխ առաջնորդ,
Լու լիցի Աբեններ, համբերեսցէ. իմ կամք են.
Մի զմտեամբ յայլ ինչ երթիր, բայց ի ջարդել զթըշնամիս:
Յաղթանակն, սիրոյ եղբօր քում՛ աւընթեր կըռուեսցիր.
Ինձ Դաւիթ երաշխաւոր է քոյ կենաց, դու իբրու նմա:

ՅՈՎՆԱԹԱՆ

Առաջնորդ է Դաւիթ, երաշխաւոր՝ Տէր Աստուած:

ՄԵՂՔՈՂ.

Շնորհէ ինձ Աստուած ըղձել, եւ ինչն ըղձեմ փրկեսցէ:

ՍԱՒՈՒՂ.

Ժամ է արդ. նախ քան ըզմարտն եկ ի խորանս. ով որդեակ,
Սեղանոյն մի կազդուրել եկ, համբերն քո սիրելի
Սփոփեսցէ յերկար սըրտի անհանգութեան ըզքեզ անդ.
Աւաժանեա քեզ նա ինքնին իւրով ձեռամբ խառնեսցէ,
Սպասաւոր եւ մատուցանող նա լիցի քեզ ի սեղան:
Այլ դուստր, — դու միայն կարես, — ուղղեա մատամբ ինչ
Ըզբարս ծնծղեն ըղձախառնման սկաւին:

# ՀԱՆԴԻՍ ԵՐՐՈՐԴ

---

## ՏԵՍԻԼ Ա.

### ԴԱՒԻԹ, ԱԲԵՆՆԵՐ

ԱԲԵՆՆԵՐ

Աւասիկ ես, ի կոչնոցն արքայն հաշիւ յարուցեալ՝
Ի հրամանըս քո գամ:

ԴԱՒԻԹ

Կամիմ խօսել ընդ քեզ գաղտ:

ԱԲԵՆՆԵՐ

Ըղձասեալ կըռուոյս լսել կամիս Թերեւս . . .

ԴԱՒԻԹ

Եւ ասել,
Զի դու չես իմ պաշտօնեայ, բայց երկոքինս հասարակ
Մերում ժողովրդեան եւ արքային մերում եմք,
Եւ միոյն Աստուծոյ Իսրայելի բարձրելոյն.
Տէր ծն անդըր քաւ ի մէնջ այլ ինչ խորհուրդ յայտնեաւէ:

ԱԲԵՆՆԵՐ

Ես արիւն արքայի՝ եւ նախ մարտից յասպարէզ
Սուր վասն իւր արիւնոտ՝ արիաբար շարժեցի,
Զեւ չըշխին քում պարսատկիդ ի լուր եկեալ անդանօր:

ԴԱՒԻԹ

Արքայի արիւն ոչ ընԹանայ յիմ երակունս.
Իմ գործք եւ գընացք՝ ամենեցուն են յայտնի,

Ոչ պարծիմ ինչ ինոսա, գիտէ զնոսին Աբեններ: —
Թո՛ղ թաղեալ ի մոռացունըս ծածկեսցին առ ի քէն.
Դու քոյոցըդ միայն արասջիր քեզ յիշատակ.
Ի նախանձ դու 'նդ քեզ մրտեալ՝ անձինդ յաղթել այժմ ուսիր:

ԱԲԵՆՆԵՐ

Կարծէի ցարդ զանձն իշխան, ոչ էր Դաւիթ ի միջի,
Իշխեցի զամենայն ի յաղթութիւն տալ հրաման.
Թէ յիս գոյր կարողութիւն զօրավարել լո՛ր այժմիկ: —
Մեր հանդէպ կայ տարածեալ ի հիւսիսոյ ի հարաւ,
Ի հովտին, փղշտացւոյն բանակ, յետուստ թաւ մացառք,
Խորաձոր վըտականով դէպ երեսացն ամրացեալ.
Սահմանէ յարեգ կուսէն ըղնա լեռնակ մի խոնարհ,
Զառ ի վայր իւր դիւր առնա, իսկ յընդդիմակ միւս կուսէ՝
Ողըն մի զառ ի վեր դըժնեայ կոշկոռ թաւաթուփ:
Դուռըն լայն ի լեռնամէջսըն փեռեկեալ ի մըրից,
Ընդ որ դաշտ ընդարձակ մինչեւ ի ծով բազմազոչ
Սըփռեալ՝ անարգել մատուցանէ ճանապարհ:
Եթէ անդր աջողեսցուք ըզփղշտացիսն արկանել,
Յաղթեսցուք պատերազմին. բայց առ այս պարտ է նախ մեզ
Ի նահանջ կեղծաւորել, և յահեկէ ի դիւրին
Ցերիս գունդս առեալ շըրջան, զաջ թեւ նոցին պաշարեմք:
Առաջին գունդն ըշտապեալ՝ թուիցի գընալ ի փախուստ,
Երկրորդն յամր յետս մնասցէ խառնափընդոր ցան եւ ցիր,
Թըշնամւոյն հրաւէր անշուշտ. անդ այլընտիր ի քաջացս
Անցեալ յարեւելից ընդ զառ ի վերն ապառաժ,
Անկցին ի թիկանց ի վերայ գուժ թըշնամւոյն:
Եւ յետուստ եւ յառաջոյ եւ ի կողաց թակարդեալք՝
Ի նախճիր կոտորեսցին խապառխապուռ դըժընդակ:

ԴԱՒԻԹ

Քաջ ես դու եւ իմաստուն առհաւատար, Աբեններ,
Զիք փոխել ինչ ի քո ռազմ. ուր քաջութիւն է՝ գովեմ.
Ես փաշտիկ եղէց, եւ ոչ պետ, եւ գալուստ իմ առ ձեզ
Սուսեր մի յաւելցէ ի պատերազմդ, ոչինչ այլ:

ԱԲԵՆՆԵՐ

Զօրապետ Դաւիթ է, Դաւիթ մարտից յօրինող.
Եւ ո՛վ այլ՝ բայց նա եւեթ պատերազմել գիտիցէ:

ԴԱՒԻԹ

Ո՞ւմ արժան էր սուրբ լինել ի նախանձուէ , բայց միայն
Քաջիդ այդմ Աբեններեայ . զի յոր դիմաց եւ հայիմ
Ի ռազմ անդըր ճակատուդ , քաջախորհուրդ գըտանեմ :
Յովնաթան եւ ես աստի կազմիմք ընդ վրան Սաւուղայ ,
Հուս յառաջ ընդ սայլն անցցէ , Սադովկ ընտրիւք հազարօք
Ի բլուրն ելանիցէ . իսկ ըզմիջոց ճակատուն
Զմարտին բուն՝ յաճախագունդ գումարտակօք կալցիս դու :

ԱԲԵՆՆԵՐ

Այն քեզ անկ է , քեզ պահի , զի է տեղի առաջին :

ԴԱՒԻԹ

Վասն այն անդր ըզքեզ կարգեմ : — Դեռ արեգակն ամբառնայ ,
Զամենայն ինչ կազմ կալցիս . սակայն փողք մի հընչեսցեն ,
Մինչեւ ժամք միայն չորք մնասցեն տուընջեան ցընդերեկս :
Հողմ ուժգին , որպէս լսես , յարեւմտից շընչէ մեզ ,
Արեւն յաչս նոցա՝ եւ փոթորկեալ իսկ փոշին՝
Փոխանակ մեր երեկուն գուպարեսցին եւ նոքա :

ԱԲԵՆՆԵՐ

Քաջ է բանդ :

ԴԱՒԻԹ

Արդ երթ հրաման տուր , եւ անարգ արուեստի
Արքունեաց պաշտօնէից՝ զոր անգիտել պարտ էր քեզ ,
Մի զպատիւ զօրապետի՝ ում արժանիդ ես՝ կապտեր :

## ՏԵՍԻԼ Բ

ԴԱՒԻԹ.

Հնարիմաց է ճակատ պատերազմին եւ ճարտար : —
Սակայն հոգ խընամոց զօրավարին զի՞նչ օգնէ ,
Եթէ չէ նորա զիւրեւ ածեալ ըզսիրտ բալայն .
Այս ուսեալ չէր յԱբեններ , եւ պարգեւեաց ինձ Աստուած :
Յաղթեսցուք այսօր , վաղիւ թողցուք զարքայ միւսանգամ ,
Զի չմարթէ ինձ լինել խաղաղութիւն առ նըմա :
Նա 'ւանիկ՝ նոր մըրցանակ նոր իմն եղեւն ինձ լցի :

# ՏԵՍԻԼ Գ

## ՄԵՂՔՈՂ. ԴԱՒԻԹ.

ՄԵՂՔՈՂ

Այր իմ՝ ո՛չ ինչ գիտիցես ։ Այն ինչ ի զուարթ սեղանոյն
Հօր մերում յարուցեալ, առ նա մատեաւ Արեններ ,
Եւ խօսէր վայրիկ մի 'նդ իւր . անցեալ յառաջ անդր եւ իմ ,
Նա ի բաց ել, եւ զարքայ ես ոչ գըտի 'ստ առաջնոյն ։

ԴԱՒԻԹ

Եւ սակայն զի՞նչ ասաց , յի՞մ իմիք քեզ թըւեցաւ . . .

ՄԵՂՔՈՂ

Նա յառաջ՝ մեր էր բոլոր , կըցո՛րդ մերոց արտասուաց ,
Գիրկս ածէր միում միում, եւ ըղձանայր իւր ի մէնջ
Ջաւակ եւ սերունդ նորաբողբոջ քաջազանց ,
Իբր իւրումըն հաստարան . ի բանսն ի վեր երեւեալ
Քան ըղձայր . այժմ առաւել քան զթագաւոր թուեցաւ ինձ ։

ԴԱՒԻԹ

Աղէ ո՛վ հարսըն դու , մի՛ տարաժամ արտասուեր .
Թագաւոր է Սաւուղ , արասցէ զկամս իւր ի մեզ .
Թէ միայն յաւուր յայսմիկ մի՛ կորուսցէ զպատերազմն ,
Ըզխորհուրդս իւր դառնութեան առցէ ի ձեռն յիս վաղիւ .
Առի՛ց եւ ես զիմ խոնարհ վիճակ , զաքսոր խիստ ,
Ըզփախուստ եւ ըզլի տառապանօք ըզկեանս իմ ։
Ըստոյգ մա՛հ իմ եւ միայն՝ է զքեզ թողուլ , եւ հարկ է ։
Ո՛վ անոտի յոյս . հարսանիք թըշուառելի վասըն քո ։
Ա՛յլ ոք այր՝ զուարճալից արքայական տայր քեզ բաղդ ,
Ես անտի զերկեմ ըզքեզ , ո՛հ եղկելիս , աւա՛ղ ինձ ։
Ոչ զուարթ եւ բազմաթիւ որդւոց զիս հայր կացուսցես՝
Ջամուսին քո երերուն եւ թափառոտ հանապազ ։

ՄԵՂՔՈՂ

Ո՛հ , ո՛չ . ոչ եւս լեցիմք այսուհետեւ բաժանեալք ,
Ի ծոցդ քումն զիս՝ ոչ ժըպրհեսցի ոք խըլել ։

Ոչ դառնամ ես միւսանգամ ի սոսկալի կենաց իմ յայն՝
Զոր կեցի թափուր ի քէն. նախ գերեզման կալցի զիս:
Յարբունիս անդ ցաւոց կայի զաւուրսըն զերկայնս
Առանձինն արտօսրալից, եւ անդ ըստուերք գիշերի
Յակն ինձ տեսիլս արկանէին խոժոռադէմ ծիւաղաց:
Էր զի զժանտ հօր սուր կախեալ տեսանէի զգըլխոյ քոյ,
Եւ զողբոց եւ զարտասուաց քոց ձայն ողորմ լսէի,
Որ զդաժան ոխս անգամ կարէր հանել ի սըրտից,
Սակայն դուժ Սաւուղ մըխէր զպղոշփատիկն ի քո սիրտ.
Էր զի զքեզ ի զանխուլըս խաւարին անձաւաց
Ի խըշտիս կարծըր վիմաց տեսանէի գետնաբեկ,
Եւ ըզսիրտ քո՛ նզոստուցեալ յամենայն սուղ սօսափիւն,
Եւ անտի յայլ քարայր ապաւինեալ, անտի յայլ.
Եւ ուրեք տեղ ոչ գըտեալ, ոչ սիրելիս, ոչ հանգիստ.
Կըլթուցեալ, խոնջ, տառապեալ, տանջեալ ի խիստ ծարաւոյ.
Ո՛հ, հըննա՞ր իցէ ինձ զօգուտս իմոց նեղութիւն,
Ըզվարանս եւ զըրտաթունդ երկար տրտմութեանս պատմել քեզ:—
Քաւ յինէն, ոչ եւս այլ թողից ըզքեզ, մի՛ լցի:

ԴԱՒԻԹ

Պատառես յինէն ըզսիրտ իմ. աղէ դու դադարեա.
Յարին՝ ոչ յարտասուս է նուիրեալ օրս այս մեզ:

ՄԵԼՔՈԼ

Թէ միայն այսօր մարտին քում խափան մի՛ տայցէ դէպ:
Ոչ խիթամ զքէն ի մարտին, է քո վտանգ անվըկանդ,
Աստուած, այլ երկընչիմ գուցէ այսօր Աբեններ
Նենգաւորն արգել ածցէ քում յաղթութեանդ, կամ խանգար:

ԴԱՒԻԹ

Թըւեցաւ ինչ քեզ արդեաւ յերկրայս՝ զիրն յիս յանձն առնել:

ՄԵԼՔՈԼ

Ոչ լսեայ. բայց յոյժ պղըտեալ գյոնան՝ առանձին շըշընջէր
Ըզմանուէ քահանայից, զանյայտ արանց ի զակշին.
Ըզպատիր քաջութենէ... բանք կըցկըտուր, մըթապատ,
Յահ ի վիշտ կընոջ Դաւթի համայն դըստեր Սաւուղայ:

ԴԱՒԻԹ

Աւասիկ նա, լռեցուք:

ՄԵԼՔՈԼ

Արդարադատ Տէր Աստուած,
Օգնեա քում ծառայիդ այսօր, ծագեա ծնողիս լոյս,
Յամօթ կըշտամբութեան զամպարըշտութեանըն մատնեա,
Զամուսինն իմ ապրեցո, պահպանեա զքո ժողովուրդ:

## ՏԵՍԻԼ Դ

### ՍԱՒՈՒՂ, ՅՈՎՆԱԹԱՆ, ՄԵԼՔՈԼ, ԴԱՒԻԹ.

ՅՈՎՆԱԹԱՆ

Աչէ եկ, հայր սիրելի, տուր հոգւոց դուլ եւ դադար,
Արդ յըստակ օդք ի բացի՝ քեզ ի սփոփանս եղիցին.
Ե՛կ ծն եկ սակաւիկ մի՛ նիստ ի մէջ որդւոց քոց:

ՍԱՒՈՒՂ

Առ իս զի՞նչ բարբառէք:

ՄԵԼՔՈԼ

Ո՛հ հայր իմ, հայր . . .

ՍԱՒՈՒՂ

Ո՛վ էք դուք.
Ո՞վ ըղձուրբ եւ զինդ երկնիւք օդոց ընդ իս խօսեցաւ.
Ա՜յս. սա մէգ է թանձրամած, խաւար է սա, մահու ստուեր:
Ո՛հ, հայեաց, մօտ մատիր. տեսանե՞ս, շուրջ բակ առեալ
Բոլորի զարեգակամբ արեան պըսակ մահագոյժ.
Լըսե՞ս զերգ ձախող հաւուց՝ բուք տխրական սփռեալ յօդս,
Որ բախէ զիս, յօդք շարժէ: Ա՜յ զի՞նչ, եւ դո՞ւք արտասուէք:

ՅՈՎՆԱԹԱՆ

Մեծդ Աստուած Իսրայելի, զերեսդ այսպէս դարձուցե՞ր
Յարքայէն Սաւուղայ. զոր երբեմն էր քո ծառայ՝
Ա՞յսպէս արդ լքեալ թողուս ի ձեռըս չար սատանին:

ՄԵԼՔՈԼ

Հայր, դստերդ սիրելի ահա կայ քեզ առընթեր.

ՍԱԻՈՒՂ.

Թէ զուարթ ես, զուարթ է եւ նա. թէ արտասուես՝ արտասուէ:
Իսկ ըզմէ՞ այժմ իցէ լալ. եկըն դարձաւ խնդութիւն:

ՍԱԻՈՒՂ.

ԸզԴաւիթ կամիս ասել. ո՛չ . . . եւ Դաւիթ ընդ որդիս
Ա՛ռ իմէ՞ արդեօք ոչ ածէ ինձ զիրկըս եւ նա:

ԴԱԻԻԹ

Հա՛յր, առ ժամս յետըս կացի, զի մի՛ տաց քեզ նեղութիւն:
Է՞ր ի սիրտ իմ ոչ մարթես կարդալ, ես միշտ ընդ քեզ եմ:

ՍԱԻՈՒՂ

Ապա դու . . զՍաւուղի սիրե՞ս ուրեմն ըզտուն իւր:

ԴԱԻԻԹ

Թէ սիրեմ. ո՛չ երկինք. բիւր է աչացս ցուցմամբ.
Վասըն քո չգիտեմ վըտանգ եւ ոչ հոգամ ինչ ըզնաւ.
Ամուսինն իմ թէ կարօղ է, ես չմարթեմ, ասասցէ,
Ո՛րչափ եւ որպիսի սիրով ըզնա սիրեցեմ:

ՍԱԻՈՒՂ

Եւ սակայն՝ դու յաչս անձին յոյժ մեծարոյ զքեզ ունիս:

ԴԱԻԻԹ

Ե՞ս ինչ զիս համարիցիմ: Ի դաշտ մարտի զանձն իմ ես
Ոչ անարգ ինչ զօրական կարծեմ, փեսայ ի տան քում.
Առաջի Աստուծոյ համարիմ զանձն իմ ոչինչ:

ՍԱԻՈՒՂ.

ԶԱստուծոյ խօսիս դու միշտ ընդ իս, սակայն գիտես քաջ
Ի վաղուց զիս յԱստուծոյ՝ քահանայիցն ոխութիւն
Զարարուեալ՝ անագորոյն՝ ահագնեռանդն՝ անջատ զիս:
Եւ դու զնոյն առ ի զի՞ս թըշնամանել անուանես:

ԴԱԻԻԹ

Ա՛ռ ի փառըս տաղ նըմին զինքն անուանեմ. իսկ դու զմէ՞
Համարիս թէ 'նդ քեզ չիցէ. 'նդ որում չկամին՝ ոչ է նա.
Իսկ որ զնա կարդայցէ, եւ լիցի յայն ապաստան,
Կարօտի՞ միթէ երբեք առ ինմանէն այնպիսին:
Նա ի գահ կոչեաց ըզքեզ, եւ նա ինմին պահպանէ.
Նորա ես, եթէ ի նա, ի նա եւեթ յուսասցիս:

ՍԱՒՈՒՂ

Ո՞վ յերկնից բարբառի ։ Որ զսուրբ շըրթունսըն շարժեաց
Ի սպիտակ պատմուճան իցէ՞ պատեալ. եկ տեսցուք ։
Ե՜հ ոչ. զինուոր ես դու, սուսեր ընդ մէջ. եկ յառաջ,
Մերձեցիր, տեսից Դաւիթ թէ Սամուէլ խօսի յիս ։ —
Զի՞նչ է սուրդ. ոչ է զոր եսն իմով ձեռամբ ետու քեզ ։

ԴԱՒԻԹ

Այս այն սուր է զոր իմ հէք պարսատիկ ինձ շահեցաւ.
Սուսեր՝ որ սայրասուր կախէր ի գլուխ իմ յԷլա.
Տեսի զայն փայլակնացեալ յաչս իմ յահեղ շանթ մահու,
Ի ձեռին գազանամիտ Գողիաթու հըսկային.
Յիս ձըգէր, բայց կայ ինմա մածեալ արիւն իւր, ոչ իմ ։

ՍԱՒՈՒՂ

Ո՞չ այն սուր՝ իբրեւ նըւէր սուրբ ի Նոմբա կախեցաւ
Առ սըրբոյ տապանակին, ո՞չ ծրարեցաւ յեփուտ սուրբ,
Եւ նովին՝ յամենայն ի պիղծ աչաց կայր տրոհեալ,
Զօնեալ բո՞ւն Տեառն առաջնում յաւիտենից յաւիտեանս ։

ԴԱՒԻԹ

Այո՛, բայց ···

ՍԱՒՈՒՂ

Արդ քեզ ուստի՞ է, ո՞վ իշխեաց տալ քեզ. ո՞ ։

ԴԱՒԻԹ

Ասացից. անգէն հասեալ իմ փախըստեայ ի Նոմբա, —
Ըզվան էր փախըստեանս անգիտանալ ինչ ոչ դու, —
Ամենայն արահետք լի վրիժագործ որերով,
Յամենայն քայլ ի ժանիս մահուն կայի ես անգէն ։
Ի խորանն ուր հոգին աստուածեղէն իջանէ՝
Խոնարհեալ ըղձակատս՝ երկիր պագի, եւ զայս սուր՝ —
Զոր թէ այր մահկանացու իշխէր ածել իւր ընդ մէջ,
Դաւթի անկ էր անշուշտ, — ցըքահանայն խընդրեցի ։

ՍԱՒՈՒՂ

Եւ նա՞..

ԴԱՒԻԹ

Էր:

ՍԱՒՈՒՂ

Ու՞նա էր.

ԴԱՒԻԹ

Աքիմելէք.

ՍԱՒՈՒՂ

Ա՛յր մահու:
Մատնի՛չ վատշուէր,.. ո՞ւր է սեղանն.. ո՛հ զայրոյթ.
Անօրէն ամենքին, ամենքեան դաւաճանք.
Թըշնամիք Աստուծոյ. եւ դուք Նորո՛ւն պաշտօնեայք.
Ոգիք սեաւ, ապխտակազգեստք... ո՞ւր է տապարն, ո՞ւր սեղանն.
Քանդեսցի. ո՞ւր իցէ զոհն, ինքնին կամիմ զենուլ զայն:

ՄԵԼՔՈՂ

Հայր.

ՅՈՎՆԱԹԱՆ

Երկինք, զի՞ գործես, յո՞վ ընթանաս, զի՞նչ խօսիս:
Աշէ արդ հանդարտ լեր. ոչ գոյ սեղան, չիք ըսպանդ.
Ի քահանայսըն պատուեա զոէր, որ յարաժամ լըսէ քեզ:

ՍԱՒՈՒՂ

Ո՞վ ունի զիս, ո՛վ նըստել ըռնադատէ, ո՞ կայ 'նդդէմ:

ՅՈՎՆԱԹԱՆ

Ո՛հ հայր իմ..

ԴԱՒԻԹ

Բարձրեալդ Աստուած Իսրայէլի, դու հասիր.
Քեզ երկիր պագանէ ծառայ քո, քեզ պաղատի:

ՍԱՒՈՒՂ

Կապտեցաւ խաղաղութիւն յինէն, արեւ, գաւազան.
Որդիք իմ եւ հոգիս, բարձաւ յինէն ամենայն:
Ո՛վ Սաւուղ թըշուառական, ո՛վ իցէ քեզ մխիթար.
Առ քո կոյր խարխափելդ ո՛վ առաջնորդ եւ կամ ցուպ.

Որդիք քո համրացեալք են, խրատաւորք, անողորմք.
Վաղափուշ ալեւորին մաշու միայն փափաքեն,
Ա՜յլ ինչ չէք ի սիրտ որդւոց՝ բայց չարաշուքըն պըսակ,
Որ ըզգլուխ քո զալեւոր արտախուրեալ բոլորէ:
Օ՜ն արիք խըլեցէք զայն. օ՜ն խըզեցէք եւ ըզգլուխ
Հօր ձերոյ գդողդոջուն յայսըմ ի փուտ իրանէս:
Ո՜հ անգո՜ւթ բաղդ, լաւ է մահ. ո՜ տայր, ըղձահ կամիմ ես:

ՄԵԼՔՈՂ

Ո՜վ հայր, ամենեքին մեք ընդ քո կենաց կամիմք,
Ի փըրկել զքեզ ընթացուք ամենեքեան մեք ի մահ: «Ս———ղ լայ»

ՅՈՎՆԱԹԱՆ (—— Դ——իԹ)

Ձի մոլուցք իւր արդ լուծան յողբս արտասուաց, օ՜ն եղբայր,
Շարժեա՛ զձայնդ՝ անդորր առնել նըմին, որպէս եւ երբեմն
Ոչ սակաւ անոյշ թըմբիր արկեր նուագօքդ երկնային:

ՄԵԼՔՈՂ

Ո՜հ, այո՛. տեսանես, յոգւոցն իւրոց ի թասել
Հինինայ ինմա շունչն, եւ աչք նորա սոսկալէք
Յարտասուս ողողանին. քեզ այժմ է ժամ օգնութեանդ:

ԴԱՒԻԹ

Հա՛պա իմ փոխանակ՝ թող խօսեսցի Տէր Աստուած: —
Ո՜վ որ յաւէժ, ամենակալ, անսահման, [1]
Բարձրեալ հանգչիս քան զամենայն արարածս,
Որ յոչընչէ ածայ ի գոյ ես ի քէն,
Խորհիմ, եւ միտքս իշխեն առ քեզ համբառնալ.
Եթէ յերկիր հայիս՝ ցեղուն խոր անդունդք,
Եւ ճանապարհ զանխուլ ի քէն ոչ պահեն.
Թէ ակնարկես գըլխով, դողան տիեզերք,
Թէ ամբառնաս զաջ քո, կորեան ամպարիշտք:
Դու ի թեւթեւ փայլակնացայտ անդ ի թեւս
Երբեմն հազար քերովբէից վայրիջեալ՝
Անտանելի աստուածութեանըդ բոցով
Զմեծ առաջնորդն իսրայէլի լըցուցեր.

---

1 Եթէ Դաւիթ երգիչ որ հանդիպեսցի, երգեսցէ զաղաղդ, ապա թէ ոչ՝ տուն առ տուն ածցի նուագ ինչ ըստ իմաստիցն, եւ զկնի ասասցէ Դաւիթ զտունն:

Դու յորդառատ աղբիւր բանից անըսպառ,
Սուսեր, հանճար եղեր նըմա եւ վահան:
Աղէ յայնչափ հըրոյդ նըշոյլ մի եւեթ
Միգափարատ՝ յերկնից առ մեզ առաքեա:
Խաւար եմք մեք, արտօսր եւ ողբ:

ՍԱՒՈՒՂ

Այս Դաւթին իցէ ձայն. զԹըմբիրս յինէն զմահաբեր
փարատեա՛, ցո՛յց ըզփայլակն խմոց տխոցըս դալար:

ԴԱՒԻԹ

Ո՞վ այն որ գայն, ո՛վ այն որ գայդ,
լըսեմ եւ ոչ տեսանեմ:
Սեաւ ամպ փոշւոյ ի մըրրախառն
ապստակեալ հիւսիսոյ: —
Բայց պատառի, եւ փայլակեն
սուսերք ի նմա բիւրաւորք.
Ահա Սաւուղ ամբարտակեալ՝
պատեալ ըզգլուխն հուր տըստամբ:
Երկիր Թընդէ յորոտաձայնս
երիվարաց եւ զինուց,
Ծով եւ ցամաք ուերկինք գոչեն
Նահատակացն յահեղ գոռս:
Գայ հասանէ Սաւուղ իբրով
ահագնացայտ զօրութեամբ,
Կառս, երիվարս եւ հետեւակս
պուղէ զմեծամբք խառնի խուռն.
Գնան յերեսաց նորա քըստմունք
յոսկերս արանց ամենայն.
Ցաչաց իւրոց բըղխէ ցայտէ
ահ եւ դողումն Աստուծոյ: —
Ո՞ւր են պերճանք ձեր ամպարիշտ,
ո՞ր խաղք, որդիք Ամմոնայ,
Եւ ոտընհար լինելդ՝ արդար
ժողովրդեան Բարձրելոյն:
Ահաւասիկ անձուկ են արդ
դաշտք դիականցըդ ձերոց,
Ահա դիզան մեզ կոծոյեալ
կառափանցդ հունձք արինոտ.
Տեսէք ի սուտ աստուածըս ձեր
վըստահութիւն յո՞ տանի: —

Իսկ ուստի՞ այլ գայ մարտագոչ
    փողոյ մռնչիւն յիս յանկարծ ։
Սուսերն ինքնին է Սաւուղի՝
    որ հողէ զազգն Եդովմայ ։
Այսպէս Մովաբ, այսպէս եւ Սովբ
    ընդ անօրէնն Ամաղէկ՝
Ցընդին փոշի. Սաւուղ հեղեղ
    ի գլուխ տարւոյն ամանոր՝
Հեղեղատէ՝ գերփէ, խլէ,
    եւ տապալէ զամենայն ։

ՍԱՒՈՒՂ

Արդարեւ՝ այս է բարբառ աւուրց իմոց առաջնոց,
Որ եւ արդ ի չիրմէ կարդայ հրաւէր ինձ ի փառս ։
Կենդանի կամ ի լսելս՝ ամօք իմովք առաջնովք ։
Զինչ խօսիմ. եղուկ զինեւ. ինձ վայելէ՞ մարտի շաւիղ ։
Պարապ՝ դիւր անյիշատակ ըղձերն յինքեանս հրաւիրեն ։

ԴԱՒԻԹ

Օն եւ մեք ըղձիւրութիւն նըւագեսցուք հանդիսաւեան ։—
    Խօնջ, ծարաւի առ ափամբ
        Իւրոյ ընիկ վտակին
        Հանդչի քաջազն Աստուծոյ՝
        Ի մըշտագուարճ հովանիս
        Անձկացելոյ սարդենւոյն ։
        Զաւակ նորա սիրալուն
        Զինքն ի սփոփել մատուցեալ՝
        Ընդ վիշտ նորա սըրբջանայ,
        Այլ ընդ գալուստըն բերկրի.
        Յամենեցունց հընչեն ձայնք
        Քաղցր եւ անոյշ արտասուաց,
        Անհաս ի վեր քան ըղձան ։—
    Մինն ի դըստերց լուծանէ
        Զճաճանչաւէտ սաղաւարտն.
        Իսկ սիրատարփ ամուսինն
        Ըղթեւմն արկեալ՝ գիրկս ածէ.
        Այլ ոմն ի չքեղ ճակատէն
        Ըզփոշոտեալ քիրտըն իւր
        Սըրբէ վըճիտ աղբերաւն.
        Այլ ոք տարափ հոտաւէտ
        Ծաղկանց սըփռէ ի վերայ,

Է որ ըղձեամն իւր արգոյս
Ոռոգանէ արտասուօք.
Եւ է որ կայ քըրթմընջէ,
Զի ոք զիւրեւ անց ի սպաս։ —
Սակայն արի արբունն եռայ
— Յայլ ինչ ի գործ համախումբ։
Մինչեւ գայցեն հօրըն գրգուանք
— Այս մին յորդւոց գործէ զուն՝
Զինջ եւ փայլուն ի վերըստին
— Սրբել ըզսուրն արիւնոտ.
Անդ ի նախանձ միւսըն մըտեալ
— Ասէ, Ես երբ ծօծեցից
Զնիզակդ՝ յոր այժմ իմըս բազուկ
— Ոչ գըտանի բաւական։
Այլ ոք զասպարըն՝ մանկաբար
— Խաղուք փորձէ զանդամովք։ —
Խընդութեան արտօսր
Յաչսըն ուռուցիկս
Արքային խաղայ.
Գիտէ զի ազնիւ
Տոհմին սիրելւոյ
Ինքն է հոգի, կեանք։
Ո՛վ չըքնաղ հանգիստ,
Ո՛վ քաղցր օթեւան,
Ուր շուրջ կան ըզքեւ
Սէր այդպիսի սերտ,
Հաւատ սըրբափայլ։
Բայց ծածկի արեւ,
Լռեն սիրք բոլոր,
Եւ ի քուն խաղաղ
Նիրհեցաւ արքայ։ —

ՍԱՒՈՒՂ

Երանի՜ հօր այդ որդւոյդ, ո՜վ գեղեցիկ հանգըստեան,
Կաթն ըզգամ քաղցրածաւալ ընդ երակունս իմ ի սող։ —
Այլ դու ի՞մ արդ ակն ունիս. աստ յառաջընին ի դիւրի
Վատթարե՞լ ըզՍաւուղ. իսկ արդ Սաւուղ քաջազօր
Այժմ անօթ պատերազմի անկեա՞լ դընի անպիտան։

ԴԱՒԻԹ

Հանգչի արքայ, սակայն անուրջք հըզօրին

Զարհուրագին կերպարանօք երեւեալ՝
Մահու խուճապս առնէն նըմին յանդիման.
Ահաւասիկ պարտեալն ոսոխ բըռնաւոր,
Յիւրմէ բազկէն սուսերահար ի մարտի,
Ոգի ահեղ՝ ոչ եւս ի վնաս ինչ ատակ։
Ահա փայլակն որ գքաջս ողջոյն շըլացոյց.
Սուսերն այն իւր՝ որ ոչ խնայէ եւ ոչ յոք,
Զարին ըմպաւ հաւասարէ ՚նդ վատթարին։ —
  Այսպէս ոչ զօրհանապազ հըռչէ անտառ
Յահաւոր՝ ահեղագոչ ձայն առիւծուն,
Զի եւ նա զըզգայութիւնս ի հանգիստ տայ.
Նա եւ ոչ ամպայընակ քարանձաւաց
Լըռութիւն քաջալերէ զանդուոյ դասակս,
Ոչ տուարած աներկեան կայ յերկիւղէն,
Զի գիտէ՝ թէ ելանէ արիւն ու ի խազմ։
    Բայց արքայ զարթնու, զէն, զէն մըռընչէ.
    Ո՞ր ախոյեան կայ, կամ առ նա տայ ձայն։
    Տեսանեմ ըզհետս ահագին հըրոյ՝
    Որում թըշնամի տեղի տացեն գունդք.
    Զիսրայելեան զէնս համակ հասարակ
    Անթըլփատ արեամբ հայիմ թըխացեալ։
    Շանթեռանդ փայլակն ահա սըլանայ,
    Քար ի պարսատկէն ոչ այնչափ երագ
    Ելեալ սըրացի՝ որչափ խորտակէ
    Երկաթ ի ձեռին յաղթողըն հըզօր։
    Ի թռիչս անմատոյց մինչ ի յերկինս հուպ
    Արծուի խրոխտապանծ՝ նա զթեւսըն ձըգտէ
    Ըզզարմանալիսն եւ զքաջահըռչող
    Եւ զաստուածատուրս յամպարըշտաց մահ՝
    Որ ի սուտ մեհեանս անօրէն պատկերս
    Իւրեանց կառուցին ստեղծագործ աստուածս։ —
    Պընդիմ ի հեռուստ ես ըզհետ նորուն,
    Ըզփըղշըտացին տանիմ փախըստեայ
    Եւ հալածական խորտակեմ, վանդեմ,
    Եւ յայտ յանդիման առնեմ ժողովոյս,
    Թէ իւր կըրկին սուրբ են ի բանակիս։

ՍԱՒՈՒՂ

Ո՞վ իցէ որ պարծիցի. եւ իցէ՞ սուր ի գընդիս
Ա՛յլքան զիմս՝ որ մերկանամ փայլակնացայտ աւասիկ.
Ամպարիշտ է, սպանցի. որ անգոսնեաց՝ կորիցէ։

ՄԵԼՔՈՂ

Աղէ կա՛ց. ո՛հ երկինք։

ՅՈՎՆԱԹԱՆ

Հա՛յր, զի՞ գործես։

ԴԱՒԻԹ

Վա՜հ, արքայ։

ՄԵԼՔՈՂ

Օ՛ն փախիր. հազիւ ունիմք ըղձա, փախի՛ր, փեսայդ իմ։
« գնայ Դուռէն »

## ՏԵՍԻԼ Ե

### ՅՈՎՆԱԹԱՆ, ՍԱՒՈՒՂ, ՄԵԼՔՈՂ

ՄԵԼՔՈՂ

Ո՛վ հայր սիրելի, հանդարտեցի՛ր։

ՅՈՎՆԱԹԱՆ

Անսա կաց։

ՍԱՒՈՒՂ

Ո՞վ ունի զիս, ո՞ իշխէ. ո՞ւր է սուսերն իմ, տուք ինձ։

ՅՈՎՆԱԹԱՆ

Ե՛կ ընդ մեզ, հայր սիրելի. եւ ոչ մի քայլ տամ քեզ թոյլ.
Տեսանես, ամենեւին չիք ոք ընդ մեզ որդիս քո.
Ե՛կ դարձիր ի վրանդ ընդ մեզ. արդ պէտս ունիս հանգըստեան։
Ե՛կ աղէ, եւ ամենայն սըրտմըտութիւն լռեսցէ.
Ընդ որդիսըդ քո կաս։

ՄԵԼՔՈՂ

Եւ ունիցիս միշտ առ քեւ։

# ՀԱՆԴԷՍ ՉՈՐՐՈՐԴ

---

## ՏԵՍԻԼ Ա.

ՅՈՎՆԱԹԱՆ, ՄԵԼՔՈԼ.

ՄԵԼՔՈԼ

Ասա ինձ, Յովնաթան. մարթի՞ դառնալ առն իմում
Ի խորանս հօր մերոյ:

ՅՈՎՆԱԹԱՆ

Ո՛չ. չէ՛ 'նդ նըմա Սաւուղ հաշտ,
Թէ եւ յանձն իւր դարձեալ. նախանձ ի նմա խոր է յոյժ,
Եւ յամով բըժըշկեցի: Դարձ յայր քո դու, մի՛ թողուր:

ՄԵԼՔՈԼ

Ո՛հ աւա՜ղ, եղո՛ւկ զինեւ, եւ ո՞քան զիս եղկելի.
Թաքուցի՛ ես ըզնա, զի չէր ումեք գըտանել.
Արդ դարձեալ դառնամ առ նա:

ՅՈՎՆԱԹԱՆ

Երկի՛նք, ահա հայրըն գայ
Աղմըկեալ, եւ ոչ ուրեք երբեք դադար գըտանէ:

ՄԵԼՔՈԼ

Վա՜յ ինձ. զի՞նչ ասացից. այլ յերեսացն առից խոյս:

## ՏԵՍԻԼ Բ

### ՍԱՒՈՒՂ, ՄԵԼՔՈԼ, ՅՈՎՆԱԹԱՆ

ՍԱՒՈՒՂ

Ո՛վ է այն՝ որ ի գաղ խմում փախչի․ ո՛վ կին, դո՛ւ ։

ՄԵԼՔՈԼ

Տէր իմ Հայր ։

ՍԱՒՈՒՂ

Ո՞ւր է Դաւիթ ։

ՄԵԼՔՈԼ

Ո՛չ ինչ գիտեմ ։

ՍԱՒՈՒՂ

Ո՞չ գիտես ։

ՅՈՎՆԱԹԱՆ

Լո՛ւր ինձ, Հայր ։

ՍԱՒՈՒՂ (առ Մելքոլ)

Ե՞րթ խընդրեա, փաղփաղակի այսըր ած ։

ՄԵԼՔՈԼ

Ե՞ս երթայց որոնեցի՞ց, իսկ արդ յո՞ր կողմ, ո՞ւր ուրեք . . . «գնաց»

ՍԱՒՈՒՂ

Քեզ արքայ բարբառեցաւ և դու չեղե՞ր ունկընդիր ։

# ՏԵՍԻԼ Գ

## ՍԱՒՈՒՂ, ՅՈՎՆԱԹԱՆ

ՍԱՒՈՒՂ

Յովնաթան, սիրե՞ս զիս :

ՅՈՎՆԱԹԱՆ

Սիրեմ ըզքեզ, ո՜վ հայր իմ.
Այլ եւ զփառըս քո սիրեմ, եւ որպէս մարթ է որդւոյ՝
Հակառակ կամ երբեմն ոչ յիրաւի բարկութեանդ :

ՍԱՒՈՒՂ

Դու յաճախ ըզհօր բազուկ ունիս, այլ զիմ զայն սուսեր
Զոր չյոտաս յայլ սիրտ մխել, դարձուցանես ի քո սիրտ :
Արդ պահեա դու պահեա զԴաւիթըն զայն կենդանի.
Լիցի 'նդ հուպ.. ո՞չ լըսես ձայն՝ ի քում սըրտիդ, որ գոչէ.
« Թագաւոր լիցի Դաւիթ » : — Այլ կորիցէ Դաւիթ նախ :

ՅՈՎՆԱԹԱՆ

Եւ ի քում սըրտիդ Աստուած ո՞չ եւս ահեղ ածէ ձայն.
« Դաւիթ իմ է սիրելի. Նա ինքն է այր Աստուծոյ » :
Ո՞չ եւ գործք իւր ամենայն նոյնպէս ըզնա քարոզեն :
Նախանձոտ կատաղութիւն Աբեններեայ մոլեգին՝
Ո՞չ կարկեալ եւ պապանձի դէմ յանդիման առ նըմա :
Դու ինքնին, ի միտս եկեալ, ո՞չ տեսանես ըզքո խէթ
Յերեւել իւր հալածեալ իբրեւ ըզմեգ յարեւէ :
Եւ յորժամ այսըն պիղծ դառնայ ի քեզ՝ հաւատա՞ս
Եթէ իմ կալեալ իցէ զբազուկդ, այլ տէր ինքն ունի :
Զանիրաւ երկաթն ի սիրտ նորա չէչտեալ հազիւ հազ,
Ստիպեցիս յետըս ձըգել, յոտն անկանել արտասուօք.
Այո՛, հայր, ապաշաւեալ. զի ամպարիշտ ոչ ես դու :

ՍԱՒՈՒՂ

Յոյժ արդար խօսիս դու. Դաւիթ անհաս իմն է ինձ :
Յառաջնում անդ տեսանելս ըզնա յԷլա՝ նոյն ժամայն
Առաջի աչաց իմոց եգիտ շընորհս, ոչ սըրտիս :

Մինչ ի սէր իւր հուպ մատչիմ, սրտմտութիւն զայրագին
Խորտորոց անդր ի մէջ անկեալ՝ բաժանէ զիս ի նմանէ.
Մինչ կամիմ սատակել, տեսիլն առնէ զիս անզէն,
Եւ լըննու զարմանալեօք՝ զի լինիմ յաչս իւր ոչինչ.
Ո՛հ, վըրէժ է այս անշուշտ ամենազօրին ձեռին:
Սկըսանիմ արդ ճանաչել ըզքեզ՝ բազո՛ւկ ահաւոր...
Աւաղ զի՞նչ. ուստի՞ պատճառս առնում. յԱստուած ոչ մեղայ.
Վրէժ է այս քահանայից, Դաւիթ գործի անօրէն
Ետես նա ի Հռամա մազկուինչ ի մահ զՍամուէլ.
Խօսեցաւ առ նա զվերջին բանն անողոք ալեւորն.
Ո՛ գիտէ, ո՛ գիտէ թէ զերկնաւոր խըղճին սուրբ,
Որով նախ ըզճակատ իմ զառաջինն էօծ նա,
Զիցէ վըրագին հեղեալ ի գլուխն ոխերիմ:
Թերեւս դու գիտես, խօսեա՛ց. այո գիտես, ո՛ն եւ ո՛ն:

ՅՈՎՆԱԹԱՆ

Ոչ գիտեմ հայր, եւ սակայն, եթէ իցէ ճըշմարիտ,
Ո՞չ եւ ինձ, իբրեւ ըզքեզ, պարտ էր ընդ այն չարակնել.
Ո՞չ յորդիադ եմ անդրանիկ. իբրեւ առ հարսդ յաւելցիս,
Ո՞չ ժառանգ արքայութեանդ աթոռոյ զիս կացուցես.
Արդ թէ կամ ես լուռ եւեթ, ո՛ ՚նդ այդ բողոք բառնայցէ:
Զանցանէ Դաւիթ զինեւ արիական զօրութեամբ,
Հանճարով, ամենայնիւ. ըստ քաջութեանն եւ սիրեմ:
Արդ թէ տուողն եւ բարձող արքայութեանց՝ ետ Դաւթի,
Զինչ հանդէս այլ խնդրեսցիս. արժանագոյն է քան զիս,
Առաջնորդ որդւոց իւրոց կոչէ զնա Տէր առ բարձունս: —
Բայց երդնում, զի քեզ ծառայ հաւատարիմ էր նա միշտ
Եւ սրտիւ որդիացեալ: Արդ զհանդերձեալ ապառնին
Թող յԱստուած՝ որում անկն է, եւ սիրտ քո մի խըստասցի
Ընդդէմ Տեառն Աստուծոյ, ճըշմարտութեան հակառակ:
Եթէ չէր ի Սամուէլ աստուածութիւն որ խօսէր,
Զիա՞րդ ծեր որ հիւանդոտ եւ առ շիրմին դուրս հասեալ՝
Անպաճոյճ, մարթէր այնչափ ինչ առնել ընդ Դաւիթ.
Զոր կըրեսդ քինութիւն եւ պատկառանք առ Դաւթի,
Սըրտատրոփ բաբախումն ի ձայն եւեթ ճակատու, —
Երկիւղ՝ յառաջագոյն ի քում սըրտեդ անծանօթ. —
Ո՞ստ ուստեք, հայր մեր Սաւուղ, աղէ ասա, գայցէ քեզ.
Եւ իցէ՞ ինչ զօրութիւն մարդկան առ այդ բաւական:

ՍԱՒՈՒՂ

Զի՞նչ խօսիս. դու Սաւուղայ՞ ճետ ես. քեզ չէ՞ զգահուն փոյթ: —

Ո՞չ գիտես , յումէ ստացեալ ունի զանգութ իրաւունս .
Իմ չիջցի տուն եւ տոհմ, արմատաքի խլեսցի
Յայնմանէ՝ որ զգաւազանս յինքըն տարեալ գրաւեսցէ :
Եղբարք քո , եւ որդիքդ , եւ դու ինքնին գլխովին . . .
Ո՛հ , եւ ո՛չ մի մնասցէ յազգատոհմէ զաւակիս :
Ո՛վ ծարաւ արքայութեան՝ անյագելի՝ անօրէն .
Զի՞նչ ինչ ո՛չ գործիցես : Եղբայր զեղբայր քեւ գաւէ ,
Մայր զորդիսն եւ առնակին զիւր ամուսին , որդի զհայր :
Արեան անկրօնութեան աթոռ է գահ արքունի :

ՅՈՎՆԱԹԱՆ

Եւ լցէ՞ մարդոյ վահան ընդ երկնաւոր թըրոյն դէմ .
Աղաչանք՝ ոչ ըսպառնումըն հանդարտել մարթասցէ .
Զահաւոր զահագնասաստ զաստուածեղէն բարկութիւնն՝
Որ զգոռոզըն խորտակէ , մեղմիկ սահի զխոնարհիւ :

# ՏԵՍԻԼ Դ

## ՍԱՒՈՒՂ, ՅՈՎՆԱԹԱՆ, ԱԲԵՆՆԵՐ, ԱՔԻՄԵԼԷՔ,
ԶՕՐԱԿԱՆՔ.

ԱԲԵՆՆԵՐ

Տէր արքայ , չեւ ոխերիմ արեանն ինեւ հոսեալ ուխք ,
Թէ լինիմ քեզ յանդիման մեծ ինչ պատճառք հարկեն զիս :
Դաւիթ քաջըն եւ կորովին՝ որով կանգնի յաղթութիւն՝
Չիք ուրեք . ժամ մի հազիւ ժամանակեալ կայ մարտին :
Զեռանդուն զօրուն լըսես մըռնչեալ ընդ օդս աղաղակ ,
Եւ զերկիր թընդեալ ի դոփ երկաթակուռ սըմբակաց
Բոցաշունչ երիվարաց . գոռք եւ խըրխինջք , զինուց փայլք ,
Եւ որոտք՝ ի հարկանել յետին վատաց իսկ խրախոյս :
ԸզԴաւիթ՝ ո՞ տեսանէ . չիք ի միջի : Եւ արդ տես , —
Արդարեւ երկնից օծան , — ո՛ կայցէ իւր փոխանակ .
Սա՛ կայ ի ճամբարիս պատմուճանեալ ի սպիտակ
Փափուկ ձորձըս կըտաւիս քահանայիցն օրինի .
Գաղտասոյր այսր ի բանակ՝ բենեամինեանցն առընթեր
Թաքթաքուր կայր ի դողի . ահաւասիկ զառաջեաւդ ,
Հարց ըզմեծ պատճառն որ զինքն առեալ՝ բերէ յայս վըտանգ :

ԱՔԻՄԵԼԷՔ

Արքայի եթէ ներէ ցասումն՝ ասեմ ըզպատճառս ։

ՍԱՒՈՒՂ

Արքայի՞ ցասումն. ուրեմն ես արժանի, անօրէն ։
Ո՞վ ես դու ։ ինձ թըւի ճարտար ըզքեզ ճանաչել.
Ի յոխորտ ցընորական երամակէ անտի ես՝
Ի Հռամա տեսանողաց ։

ԱՔԻՄԵԼԷՔ

Իմ է զեփուտն ըզգենուլ.
Ես, սըրբոյն Ահարոնի, յառաջադաս Ղեւտացւոց՝
Ի պաշտօնն աստուածային յոր զինքն ընտրեալ կացոյց Տէր,
Յետ երկայն դասուց արդոյ քահանայից, եմ յաջորդ ։
Ի Նոմբա բնակեմ ես՝ առ տապանակն ուխտին սուրբ,
Որ եւ նա յայլ ինչ նըւազս ի բանակիս օթանայր ։
Աւելորդ իմն է այժմիկ՝ թէ զըտցի անդ եւ թաքուն
Պաշտօնեայն Աստուծոյ. զի ուր Սաւուղ հրամայէ՝
Կարասի եկամուտ է անդանօր քահանայ.
Սակայն ոչ, ոչ է անդ՝ ուր Իսրայէլ գընէ մարտ,
Աստուծով եթէ իցէ մեր յաղթութիւն՝ որպէս միշտ ։ —
Դու զիս ոչ ճանաչես. եւ զի՞նչ զարմանք իցեն այս.
Իսկ դու զքեզ ճանաչե՞ս ։ — Խոտորեցեր զոտըս քո
Ի շաւղացն որ առ Տէր. իսկ ես անդէն կամ մընամ
Ուր բնակէ մեծն Աստուած ի խորանի վկայութեան,
Անդանօր՝ ուր ի վաղուստ ըզՍաւուղ ոչ նըշմարեմք ։
Եւ անուն յորջորջական՝ Աքիմելէք ինձ կոչի ։

ՍԱՒՈՒՂ

Յիս մատնիչ հընչէ անունդ. եւ այժմ ըզքեզ ճանաչեմ.
Ի ժամու գաս զառաջնեաւս. արդ ասա դու չիցե՞ս այն
Որ Դաւթի տարագրելումն ետուր ամուր ապաւէն,
Կերակուր եւ թաքստոց եւ զէն. եւ զէն որպիսի՞.
Ըզսուսերըն նուիրական զփըղըշտացւոյն որ ի ձօն
Կախեալ կայր Աստուծոյ ի վըրանի անդ ժամուն,
Ուստի դու զայն քոյովդ կորզեցեր պիղծ ձեռամբ ։
Եւ դու զայն ածեր ընդ մէջ խարդախողի թըշնամւոյն
Տէառըն քո եւ միում միայնոյ քոյդ արքայի ։ —
Եւ դու գաս, վըրա՛դ չար, այսր ի բանակըս զօրուս.
Ո՞ ըրնաւ շուշտ կայցէ թէ մատնեստուր եկեալ կաս ։

### ԱՔԻՄԵԼԷՔ

Արդարեւ զքեզ մատնել գամ, զի յաղթութիւն գամ խնդրել
Զինուց քոց ի Տեառնէ՝ որ արգելու զայն ի քէն։
Այո ես եմ որ Դաւթի կարկառի ձեռըն սիրոյ ։
Բայց Դաւիթ միթէ չիցէ՞ փեսայ ի դուստր արքայի ․
Ո՞չ ի մէջ քաջացըն քոյ, հեզահամբոյր, գեղեցիկ,
Եւ արդար քան զամենայն իսրայելեանըս զաւակ ․
Ո՞չ նա ինքն ի պատերազմ՝ քոյին բազուկ եւ խրախոյս ․
Յարքունիս ի դուլ զինուց ո՞չ ինքն երգով սըրտիդ տէր ․
Սիրելին օրիորդաց, ժողովրդեան խնդութիւն,
Թըշնամեաց արհաւիրք ․ ես այդմ եղէ կնքուցիչ։
Եւ դու ինքն ո՞չ դարձուցեր զնա յառաջին իւր պատիւս,
Ո՞չ եւ զինքն ընտրեցեր պատերազմիդ առաջնորդ,
Յաղթութիւն ածել զընդիդ, եւ փարատել ըզկասկած
Խորտակման՝ զոր արկեալ է Տէր Աստուած ի սիրտ քո ։—
Եթէ զիս պարտաւորես՝ դատապարտես անձամբ զանձն ։

### ՍԱՒՈՒՂ

Իսկ ուստի՞ գութք ի ձեզ ի քահանայսդ, անողորմք,
Ամպարիշտք, եւ արեան հանապազոր ծարաւիք ։
Թըւեցաւ Սամուէլի եղեռըն մեծ, այն զի ես
Չըսպանի զԹագաւորն Ամաղեկայ զձերբակալն
Ի մարտի՝ զէն ի ձեռին, Թագաւոր մեծ քաջազէն,
Քաջաբուն, քաջայանդուգն ազնըւական շառաւիղ,
Զանխայող ի ծախս արեան իւրոյ ի նպաստ ամբոխին ։
Արքայ հէք ․ իմ առաջի խիստ կապանօք ձըգեալ գայր ․
Յուցանէր տակաւին, Թէպէտ կապեալ, յանձըն իւր
Պերճութիւն ազնըւական, ոչ Թըշնամանք, ոչ աղերս ։
Յանցաւոր Սամուէլի ժանտին Թուեցաւ արութեամբն ․
Սուրբ ձեռամբն ի սիրտն անզէն մըխեաց երիցս ըզդաշոյն ։—
Այս են ձեր, ձեր այսոքիկ պատերազմունք են, ո՛վ վատք ։
Իսկ որ գլուխ ընդ դէմ իւրում տեառն ամբառնալ յողայցէ,
Գըտանէ ի ձեզ Թիկունս եւ ապաւէն եւ ասպար ․
Ձեզ ա՛յլ հոգք, Թո՛ղ ըզսեղանն, են սիրելիք ամենայն ։
Ո՞վ էք դուք, դուք ո՞վ իցէք, ազգ ապիրատ եւ անգութ,
Որ զմերոցըս վըտանգաց յանքոյթ ամրի ծիծաղիք,
Որ յանօսր ի կտաւ պատեալ՝ ժըպրհիք ըզմեօք անցանել,
Ըզմեօք՝ որ ընդ քիրտն եւ ՚նդ ապաժոյժ գամք ի զէնս,
Ըզմեօք՝ որ ընդ արիւն, ընդ արհաւիրս եւ ընդ մահ՝
Վասն հարսանց եւ զաւակաց եւ ձեր ինքնին իսկ անձանց

Աւուրբս սոսկալիս տառապագին վարեմք ցանգ ։
Եւ արդ դուք, վատք եւ անգործք՝ ոչ ինչ ընդհատ ի կանանց,
Արհամարհ գաւազանաւ եւ ի պաճոյճ մըրմընջոց
Նըւաճե՛լ նըկըրոտեցէք ըզաւուրբս մեր եւ ըզմեզ ։

ԱԲԻՄԵԼԷՔ

Իսկ դու զի՞նչ. արքայ երկրի. այլ յաչս Տեառն՝ ո՞վ արքայ ։
Մօտ ի քեզ յանձնըդ, Սաւուղ. չես ինչ բայց հող թագաւորդ. —
Ես ոչ ինչ իսկ եմ ինձէն, սակայն փայլակն եմ, մըրրիկ,
Փոթորիկ եմ՝ եթէ յանձն իմ Տէր Աստուած իջանէ,
Մեծն Աստուած քոյդ արարիչ՝ որոյ հազիւ հազ ի քեզ
Գամ մի ակն արկեալ հայել, եւ ո՞ր գըտցի անդ Սաւուղ ։ —
Զարաչար զովես զԱգագ, եւ չարաչար գնաս ըզհետ
Ամպարիշտ շաւղաց նորա ։ Եղեռնաթիւր արքայի
Բաց ի որոյ թըշնամեաց գուցէ՞ ինչ այլ պատուհաս.
Մինթէ սուր հարկանիցէ՝ եթէ ոչ Տէր կամեսցի ։
Ըզվրէժըս իւր Աստուած գըրէ յարձանըս կըճեայս,
Եւ որպէս ի փըղըշտացին, նոյն յԻսրայէլ աւանդէ ։ —
Սոսկացի՛ր, Սաւուղ, ահա ի թուխ ամպրոպ ի բարձունս
Սաւառնեալ հրեղէն թեւօք հայիմ զհրեշտակըն մահու.
Մերկանայ միով ձեռամբ ըզհրաշէկ սուր վրէժխընդիր,
Միւսով բուռն հարկանէ զալեաց գըլխոյդ անօրէն ։
Դողացի՛ր Սաւուղ. — Տես ո՞վ է որ ձգէ զքեզ ի մահ.
Սա ինքն այս Աբեններ, Սատանային հարազատ,
Որ ըզսիրտ քո զառամ կասկածանօք պըղտորէ,
Որ ըզմեծ պատերազմօղդ՝ առնէ նըւազ քան զմանուկ,
Դու պանդոյր՝ ըզբուն բընիկ տան քոյ նեցուկ եւ զամուր
Հալածես վըտարանդի ։ Ո՞ր իցէ տուն Սաւուղայ.
Նա յալիս զայն հիմնեցոյց. ահա դըղրդի, անկանի,
Աւասիկ յաճխին դառնայ, ահա մըղեղեալ կայ յոչինչ ։

ՍԱՒՈՒՂ

Մարգարէ իմոց չարեաց, այլ դու քոյոցդ ոչ եղեր.
Ի բանակըս չեւ եկեալ՝ թէ ի մահ գաս՝ չիմացար.
Զայն քեզ ես պատմեմ կանխաւ, եւ Աբեններ հանցէ յանդ ։ —
Աբեններդ իմ մըտերիմ, երթ արդ փոխեա զամենայն
Ըզկարգածն անօրինին Դաւթի՝ յորս նենգ կայ ծածկեալ ։
Յեղանել արուեստին վաղիւ տացի պատերազմ.
Աստղին այն պայծառ՝ վըկայ գուպարածի կացցէ ինձ ։
Խորհուրդ չար էր Դաւթի, արդ տեսանեմ, զի կացոյց
Ի մուտս արեգական ի թըշնամին տալ դըրոյթ,

Գոգցես լինի ի նըշան խոնարհելոյ իմ բազկիս.
Այլ տեսցուք: — Ջամենայն ոգիս իմ չիս տեսանեմ
Կազդուրեալս ի սպառնալեացդ. ես եմ վաղիւ սպարապետ.
Առ նախճիրսըն մեծամեծ զոր գործեցից առ վաղիւ՝
Տէին ողջոյն կարճառեսցի: — Դու հապա զայրդ, Աբեններ,
Յերեսաց իմոց քարշեա վազվազակի, եւ սպանցի:

ՅՈՎՆԱԹԱՆ

Ո՛վ երկինք, հայր՝ զի՞ գործես. հա՛յր...

ՍԱՒՈՒՂ

Դու լուռ լեր. ո՛ն զենցի,
Եւ արիւն իւր զազիր՝ ի գլուխս անկցի փղըշտացւոց:

ԱԲԵՆՆԵՐ

Այժմէն նա ի մահ գընայ...

ՍԱՒՈՒՂ

Այլ նա սակաւ է յիմ վրէժ:
Առաքեա ի Նոմբա զըրտմըտութիւն բարկութեանս,
Այր եւ կին, անդեայ, ծառայ, մանկտի եւ տուն ըսպանցէ,
Այրեսցէ, փլուզցէ, ողջոյն զազգն ամպարիշտ հողմք առցեն:
Այժմիկ քո քահանայք գոգցեն իրաւ՝ զոյ Սաւուղ:
Բազուկ իմ ի ձէնջ յաճախ յարիւն զըրգըռեալ՝
Չհարկաներ ըզձեզ. անտի, անտի միայն իւր ձաղանք:

ԱՔԻՄԵՂԷՔ

Ձիս արքայ չկարէ ոք զըրկել յարդար մահուանէ.
Վասն որոյ՝ քաղցր է ինձ մահ եւ ոչ սակաւ փառաւոր.
Ըզքոյդ՝ Տեառն ի վաղուց անդարձաբար է կընքեալ.
Աբեններ եւ դու ի սուր՝ անարգաբար երկոքին.
Եւ ո՛չ եթէ ի սուր Թըշնամւոյն, ո՛չ ի մարտի: —
Ո՛ն երթամք. զվերջին պատգամս առ ամպարիշտն յԱստուծոյ
Խօսեցայ, եւ խուլ գըտաւ. պաշտօնն իմ լի բովանդակ
Վըճարեալ է արդ այժմիկ. ըզկեանս ուղիղ ծախեցի:

ՍԱՒՈՒՂ

Ո՛ն ի մահ վարեսցի շուտ. ի մահ դըժնեայ եւ ի տոկ:

# ՏԵՍԻԼ Ե

## ՍԱՒՈՒՂ, ՅՈՎՆԱԹԱՆ.

ՅՈՎՆԱԹԱՆ

Ո՛հ արքայ խելացընոր․ զի՞նչ գործ գործես․ անսա, կա՛ց։

ՍԱՒՈՒՂ.

Կարկեցի՛ր, ասեմ դարձեալ։ — Պատերազմի՛կ իցես դու,
Եւ դու իմ Հարազատ․ դո՛ւ ժխտրայել ախոյեան․
Արի երթ, դարձ ի՛ Նոմբա, զթափուր աթոռ արա լից․
Արժանիդ դու կեալ ի զեւոտական յուլութինս,
Ոչ ի խազմ մարտամբոխից, ոչ յարքունի հեթեթանս։

ՅՈՎՆԱԹԱՆ

Եւ իմ ո՛չ սակաւ ընդ քեզ է սատակեալ զունդ սոսխ,
Բայց զոր այժմըդ հեղուս, քաջանայից է արիւն,
Եւ ոչ փղշտացի․ դո՛ւ մեռս միայն յայդ զուպար։

ՍԱՒՈՒՂ.

Բաւական եմ ես եւեթ առ ամենայն պատերազմ․
Դու պըղերգ, ապաժաման լիջիր փախիւ եւ ի կռիւ․
Ես միայն եղէց Սաւուղ, զի՞նչ Յովնաթան, զի՞նչ Դաւիթ․
Սաւուղ է զօրագլուխ։

ՅՈՎՆԱԹԱՆ

Եւ ես առ քեւ կըռուեցայց․
Եւ ինձ ո՛ տայր առաջի աչացըդ քոց անկանել,
Չեւ տեսեալ որ ինչ պահի Թըշուառական արեան քում։

ՍԱՒՈՒՂ.

Զի՞նչ պահի․ մա՛հ․ ի մարտի արքայական է այն մահ։

## ՏԵՍԻԼ Զ

### ՄԵՂՔՈՂ, ՍԱՒՈՒՂ, ՅՈՎՆԱԹԱՆ·

ՍԱՒՈՒՂ.

Իսկ առանց Դաւթի դո՞ւ։

ՄԵՂՔՈՂ.

Ընդ նա չկարեմ գտանել։

ՍԱՒՈՒՂ.

Ես գտից։

ՄԵՂՔՈՂ.

Հեռի թուի նա ի ցասմանէդ փախուցեալ։

ՍԱՒՈՒՂ.

Թուիք են բարկութեանս, եւ ընկճնի իւր հասցէ։
Վա՜յ ի գլուխն, եթէ Դաւիթ ի պատերազմն յայտնեսցի·
Վա՜յ, վաղն յետ յաղթութեան պատերազմիս եթէ դու
Ինձ ընդ նա դէմ յանդիման այսր ածեալ ո՛չ կացուցես։

ՄԵՂՔՈՂ.

Ո՛հ երկինք։

ՅՈՎՆԱԹԱՆ

Աւաղ հա՜յր։

ՍԱՒՈՒՂ.

Իմ ո՛չ եւս այլ են որդիք։
Յովնաթան, ընթա փութա ի գունդն, եւ դու գնա՛ ընդ նա։

ՄԵՂՔՈՂ.

Աղէ՛ 'նդ քեզ . . .

ՍԱՒՈՒՂ.

Ի զո՛ւր։

ՅՈՎՆԱԹԱՆ

Ի քէն ես հայր հեռի՛ կրաւեցայց:

ՍԱՒՈՒՂ.

Ո՛ն ի բա՛ց կացէք յինէն ամենքին դուք դրուժանք.
Ըզփմեամբք առհասարակ ելանէք դուք դաւել զիս.
Ո՛ն երթայք, զայդ կամիմ. հապա երթայք, հրամայեմ: «ձնան»

## ՏԵՍԻԼ Է

ՍԱՒՈՒՂ:

Արդ ընդ իս միայն եմ: — Յինէն եւեթ միայնակ, —
Եղկելի թագաւոր, — յանձնէ միայն ոչ դողամ:

# ՀԱՆԴԷՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ

---

## ՏԵՍԻԼ Ա.

### ԴԱՒԻԹ . ՄԵԼՔՈԼ .

ՄԵԼՔՈԼ

Արի՛ , այր իմ , եւ ի դուրս , զի կարճատեւ է գիշեր . . .
Լսեմ ձայն ըղձանակին . այգուցն ի կախ մառիցն : —
Առ հօրըն խորանաւ առհասարակ լռութիւն
Տես ահա , քում փախըստոյդ են եւ երկինք օգնական .
Ըղձումնին յետին նըշոյլս ծածկէ ի մուտս ամպ մըթին :
Ե՛կ երթամք . ոչ ոք ըսկէ այժմ ի վերայ մեր . երթամք .
Իջցուք ընդ այս դար ի լեռնէս , ընկերեսցէ մեզ Աստուած :

ԴԱՒԻԹ

Հարսն՝ հոգւոյս մասն ընտրական , եւ լինիցի՞ ճըշմարտիւ ,
Իսրայէլ մինչդեռ ի կախ՝ Դաւիթ խուսել կազմիցի :
Հուսկ ուրեմըն զի՞նչ է մահ : — Կամիմ մընալ . Թող Սաւուղ
Թէ կամի՝ սպանցէ զիս . բայց ես նախ հայըս ոսոխաց :

ՄԵԼՔՈԼ

Ո՛հ , չգիտես . հայրն ըսկըսաւ յարիւն թանալ զբարկութիւնն .
Աստ դիպեալ Աբիմելէք՝ ցասման իւրում եղ ըսպանդ :

ԴԱՒԻԹ

Զի՞նչ լըսեմ . ի քահանայս մըխեաց նա զսուրն . հէք Սաւուղ :

ՄԵԼՔՈԼ

Լո՛ւր եւ այլ . անգութ հրաման Աբեններեայ ետ ինքնին ,
Թէ տեսցիս ի մարտն , ի քեզ մեր ախոյեանք հարցեն սուր :

ԴԱՒԻԹ

Եւ լռէ՞ այդմ Յովնաթան իմ մըտերիմ՝ տըւեալ թոյլ։

ՄԵԼՔՈՂ

Ո՛հ երկինք. եւ զի՞նչ զօրէ. եւ նա վրիժուցն հօր դիպաւ,
Եւ անյոյս ընթանայ ի խռան զինուց մեռանել:
Տեսանես, այժմ ոչ կարես կալ աստ, տեղի հարկ է տալ,
Հեռանալ եւ ակն ունել՝ թէ փոխեսցի թերեւս հայրն,
Եւ կամ՝ հասակին իւրում նըկուն լինիցի:
Անգութ հայր. դու զդուստրըդ հէք հարկես խընդրել զօրդ յետին
Սակայն ոչ, ես ոչ խընդրեմ քեզ մահ, կեցցես երջանիկ,
Կեցցես, եթէ կարես. ինձ շատ լիցի կալ յաւէժ
Ընդ իմում փեսայիս: Ե՛կ արդ աղէ՝ երթիցուք:

ԴԱՒԻԹ

Ցաւէ ինձ թողուլ ըզմարտն. յիս գոչէ ձայն անծանօթ.
« Որ ահեղ իսրայէլի եւ արքային իւր եհաս »:
Ո՛ վայր ինձ . . . սակայն ոչ. պաշտօնէիցըն սըրբոց
Այս հեղաւ ամբիծ արիւն. պիղծ է երկիր, գետին գարշ,
Սոսկայ Տէր, ոչ եւս կարէ պատերազմել աստ Դաւիթ: —
Հարկ է արդ քում երկիւղիդ եւ զգօն սիրոյդ զիջանել: —
Տուր տեղի եւ դու իմումս: Աղէ զիս թո՛ղ առանձինն:

ՄԵԼՔՈՂ

Ե՞ս ըզքեզ թողուցում. ահա զքղանցիցըդ ունիմ.
Ես ի քէն այսուհետեւ քաւ մի՛ լիցի թէ զատայց:

ԴԱՒԻԹ

Աղէ լո՛ւր. զքո յամր ընթացս հաւասարել ինձ չունիս.
Պարտ է ինձ արագ ոտամբ կոխել զերեզ եւ զմացառս
Ի դընել զանձն իմ յամրի, քանզի դու զայս ընտրեցեր:
Ի՞բր աղէ՝ ոտք քո փափուկք յայս բիրտ տանջանս տոկայցեն,
Ցամայի անապատս ըզքեզ միա՞յն թողուցում.
Տեսանես, ի քո պատճառս անդէն ի յայտ եկից ես,
Եւ խկոյն յատեան ահեղ սըրտմըտութեան արքայի
Զերկոսին զմեզ կացուսցեն. ո՛հ, ի խորհելն իսկ սոսկամ:
Եւ տըւեալ թէ փախիցուք, զիա՞րդ ի քէն զըրկեցից
Զհայրն հիւանդ եւ ցաւագին, որ արքունեացն արտաքոյ
Կայ ի վտանգ մարտի. տըխուր ծերոյն պիտին ըսփոփանք:

Կաց մնա դու յարտասուս իւր եւ ի ցաւս եւ զայրոյս.
Որպէս դու զնա միայն, ըսպաս տանիս, դու եւեթ
Զինքն ի կեանըս պահես. նա զիս խընդրէ սպանանել.
Ես նըմա երջանկութեան եւ փրկութեան աղօթեմ,
Ընդ սոսին՝ եւ յաղթութեան, .. բայց ի դողն կամ այսօր: —
Դուստր էիր դու նախ քան հարսն, եւ ոչ օրէն ինչ է քեզ
Սիրել զիս քան զարժանն. ես թէ միայն ապրեցայց,
Զի՞ եւս այլ խընդրես առ ժամս. աղէ մի՛ զքեզ գողանար
Ի կարի վըշտացելոյ թըշուառական ծընողէդ:
Ընդ զերծուլս յանկասկածի՝ թռուցից առ քեզ զաւետիսն.
Ակն ունիմ թէ ի մի վայր վաղվաղակի եկեսցուք:
Արդ խորհեա թէ ինձ ցաւէ՞ թողուլ ըզքեզ . . այլ . . եղո՛ւկ:

ՄԵԼՔՈԼ

Զիս եղուկ . . . . իցէ՞ դարձեալ կորուսանել ինձ ըզքեզ.
Եւ թողլի՞ց ըզքեզ դառնալ ի տառապանս առաջինս,
Ի կենցաղ մոլորական, ի վտանգս, յանձաւսըն զանխուլ . . .
Լինէի ես զէթ ընդ քեզ. վըշտակից լեալ սփոփէի . . .

ԴԱՒԻԹ

Աղաչեմ զքեզ ի սէր մեր. թէ պէտք իցեն՝ հրամայեմ,
Որչափ հնար է սիրողի. արդ ոչ պարտիս, եւ չկարես
Գալ ընդ իս առանց իմոյ յայտնի վտանգի՝ զոր լըւար:
Իսկ թէ Տէր կամի փըրկել զիս՝ չէ պարտ ա՛յլ յամենալ.
Անցանէ ժամս. ի վրանէ աստի զուցէ տեսցէ ոք,
Եւ քսեսցէ առ չարութեան: Ես ըզլերինս այսոսիկ
Գո՛գ թըզաւ չափեալ գիտեմ. ուժք ի ձեռս ոչ անկայց: —
Արդ աղէ՝ զվերջին համբոյրդ ինձ տուր այժմիկ: Տէր ընդ քեզ.
Եւ դու 'նդ հօր քում կաց մինչեւ դարձուսցեն զայր քո երկինք:

ՄԵԼՔՈԼ

Ո՛վ վերջին ողջոյն, եւ ես չմեռա՞յց. զոգիս իմ հանես:

ԴԱՒԻԹ

Իսկ արդ ե՞ս . . . այլ աղէ՝ դադարեցո զարտասուսդ: —
Այժմ Աստուած հըզօր՝ ինձ թեւս ի գարշապարըս բուսո՛:

## ՏԵՍԻԼ Բ

### ՄԵԼՔՈԼ.

Նա սրանայ · զհետ պընդեցայց · այլ ո՞ր շըղթայք ունին զնա ·
Ոչ կարեմ, նա չերեւի · հազիւ զօրեմ կալ յոտին ,
Թող թէ զհետ ընթանալ · կորուսի զնա միւսանգամ ։
Ե՞րբ տեսցես զինքն , ո՛ գիտէ · · հէք կին , եւ հա՛րսն լցես դու ·
Եւ այն քո հարսանիք էին · ոչ , ոչ · յայսմհետէ
Ոչ եւս կամ առ անգութ հօր · այր իմ , ըզհետ քո եկից ։ —
Այլ թէ զհետ իւր ելանեմ , անշուշտ նըմա նիւթեմ մահ ·
Ի՞բր ըզմեղմ հետս իմ լիցի 'նդ երագ շաւիղս իւր խառնել ։
Իսկ զի՞նչ ձայն ի բանակէն լսեմ · զինուց թըփի շաչինչ ·
Լսեմ քաջ · · զօրանայ , շըփոթ ընդ փողըս զանխուլ ·
Արշաւել երիվարաց · · զի՞նչ լինիցի , ո՛հ երկինք ·
Պատերազմ յառաջ քան զայգն՝ ոչ պատուիրեաց զայդ Սաւուղ ։
Ո՛ գիտէ · · · իմ եղբարք · · · իմս Յովնաթան , վայ ինձ վայ ·
Թերեւս յոյժ ի վտանգի · · այլ ի վրանէն հօր լսեմ
Զի հընչէն ողբք եւ կառանչք եւ խոր յոգւոց հանութիւնք ·
Եղկելի՛ հայր , ընթացուք աղէ առ ինքն · · ո՛վ տեսիլ ։
Ինքըն գայ , նա իսկ ինքնին · յո՞ր կերպարանս · · աւա՛ղ հայր ։

## ՏԵՍԻԼ Գ

### ՍԱՒՈՒՂ, ՄԵԼՔՈԼ.

#### ՍԱՒՈՒՂ

Ոգի՛ սըրտմըտեալ եւ սոսկալի , դադարեա ,
Թո՛յլ տուր զիս · տես աւասիկ · յոտսըդ յերկիր անկանիմ ·
Յո՞ փախչիմ , · · յո՞ թաքչիմ · հաշտեա՛ց ահեղ ոգի ժանտ ·
Այլ նա խուլ է յաղաչանս , եւ տագնապէ զիս անգութ ։
Ո՛վ երկիր , պատառեցի՛ր եւ կենդանւոյն կըլլեա զիս ·
Ո՛հ , ո՛ տայր թէ միայն աչաւորս ա՛յս հոգեգէշ
Զաչըս իւր ըզգըլխընդակս յիննետաձիգ չարձակէր ։

ՄԵԼՔՈՂ

Ո՛վ հայր, յումէ՞ փախչիս, չիք ոք որ զքեզ հալածէ.
Դու զիս ո՞չ տեսանես, ո՞չ ճանաչես զիս այլ եւս:

ՍԱՒՈՒՂ

Ո՛վ դու մեծ քահանայդ, ո՛վ սուրբդ, ինձ կա՞լ կամիս աստ.
Սամուէլ, ո՛վ ճըշմարիտ հայր իմ, զայդ դո՞ւ պատուիրես.
Աւասիկ առ քո մեծ հրամանդ ի հող խոնարհիմ:
Դու երբեմըն յայս գըլուխ քով ձեռամբ թագ կապեցեր,
Պըճնեցեր դու զայն ինքնին, արդ զամենայն զարդ նորա
Կողոպտեա, կոխեա 'նդ ամթուր, այլ ըղձուսերըն հրաշէկ
ԶԱստուծոյ զահագին՝ զոր յիս շողեալ նըշմարեմ,
Դու կարօղդ, դարձո զայն, ոչ յինէն ոչ, ա՛յլ յորդւոցս.
Անմեղ են որդիքս իմոց անտի յանցանաց:

ՄԵԼՔՈՂ

Նո՛ր զըմխաղ. հայր՝ աչքդ ուղիղ ոչ տեսանեն. առ իս դարձ:

ՍԱՒՈՒՂ

Արդ բերկրիմ. խաղաղեցան երեսք քո, ծեր անողոք,
Լըսե՞ս փո՞քր ինչ զիմ աղերս. յուսից քոց ես ոչ յառնեմ,
Թէ զորդեակս իմ յանողորմըն վըրիժուց ո՞չ ազատես:
Զի՞նչ խօսիս. ա՛յ բարբառ. «Եւ քեզ որդի՛ էր Դաւիթ,
» Եւ դու զնա հալածեցեր, եւ սպանանել կամէիր»:
Ո՛հ, ինձ զի՞նչ ընդդէմ դընես, անսա, կաց այժմ, յապաղեա՛:
Դաւիթ ո՞ւր է, խընդրեսցի՛, դարձցի սպանցէ զիս ըստ կամս
Առցէ զթագն, յորդիս միայն իմ գըթասցի, տիրեսցէ: —
Սակայն կաս անողոք. արիւնըռուշտ են աչք քո.
Ձեռք եւ սուր քո՝ հրեղէն. ի լայն ռընգանց քոց շընչես,
Բոց պըղտոր, եւ ընկենուս յիս, արդ եհաս, եւ կիզու.
Աւա՜ղ, յո՞ փախչիցիմ. ընդ այս դիմեալ ապրեցայց:

ՄԵԼՔՈՂ

Զի՞ցէ հնար քեզ դուլ դադար, ո՞չ գալ ի լոյս. լո՛ւր ինձ, արդ...

ՍԱՒՈՒՂ

Այլ ոչ. անդուստ խընու զընթացս հեղեղ մեծ արեան.
Տեսի՛լ ժանտ. աստի անտի յափունսըն իւր յերկոսին
Մեծամեծ գիշեալ խըրձունք նորախողխող դիականց,

Ո՛հ, անդ մահ է ամենայն. ընդ այս սրեամբն փախեայց։
Զի՞նչ է այս. ո՞վ էք դուք. — «Աբիմելեքայ եմք որդիք.
» Ես եմ Աբիմելէք. մեռիր Սաւուղ. սատակեցայց»։
Ո՛հ, զի՞նչ գտիք. ճանաչեմ. դեռ նոր արեամբ կայլակէ,
Եւ զարիւնս ըմպէ. ինկ ո՞ զծերոցս ունի զեռ յետաստ։
Սամուէլ գա՛յ. — զի՞նչ ասէ. եթէ ի սուգ ինչ մամն
Ընդ քեզ եմք լինելոց ամենեքին։ Եւ միայն,
Միայն ես եղէց ընդ քեզ. բայց իմ որդիք.. ո՞ւր կացեն։ —
Լուրեան, ի սուգ փայլկեան անհետացան ուրուականք։
Զի՞նչ խօսիմ, ո՞ր եմ ես, զի՞նչ ինչ գործեմ. ո՞վ ես դու,
Զի՞նչ շաչիւն է զոր լսեմ. պատերազմի թմբկին թնդիւնք.
Այլ դեռ ոչ լուսանայ. իրա՛ւ մարտի է գրգոռ։
Ո՛ն ի զէն սաղաւարտ, ասպար, նիզակ տուէք ինձ.
Հասա զէնք, զէնք արքային. ընդ մահ կամիմ, այլ ի դաշտ։

ՄԵՂՔՈՂ.

Զի՞ գործես, հայր, հանդարտեաց, զգաստեցի՛ր քում սիրելոյ...

ՍԱՒՈՒՂ.

Ընկղմեալ կամիմ. զի՞ կայ զգաստ. հնազանդեաց.
Դեղխանց, ասեն եւ փախեան. աշտարակին իմ որդիք։

ՄԵՂՔՈՂ.

Ոչ ատ թոյլ քեզ ես, ոչ. ընկեա ուրեք ոչ թողում։

ՍԱՒՈՒՂ.

Ո՛ւժգնակից դուստրն փոքր. մի առնուլ անդր երթայց.
Շատ է ինձ իմ սուր միայն. ի բաց կաց դու, թո՛յլ սուր ինձ.
Հնազանդեաց. անդրէ զինեմ. զոր ես խնդրեմ՝ անդ է մահ։

## ՏԵՍԻԼ Դ.

ՍԱՒՈՒՂ. ՄԵՂՔՈՂ. ԱԲԵՆՆԵՐ, զինուորօք

ԱԲԵՆՆԵՐ

Ո՛հ եղուկ թագաւոր, զարդեա զու յօյ ընթանաս.
Գիշեր զարհուրագին է այս։

ՍԱՒՈՒԴ.

Իսկ զի՞ զպատերազմն . . .

ԱՐԵՆՆԵՐ

Որդին զաւթեալ յանկարծ՝ խորտակեցաք մեք ի սպառ ։

ՍԱՒՈՒԴ.

Խորտակեցայք համօրէն . եւ դու միայն՝ կեանս գտեալ ես ։

ԱՐԵՆՆԵՐ

Նա՛ . ի քո կեամ՝ փրկութիւն . որդ խաւմէ այսր Փեղկը .
Յառաջքն զրմնէ թափոյն հարկ է խաւսել մինչ ի լոյս ։
Ըզրեց անդր ի զաւխքերն առ իմ նուաղումըն հանից ։

ՍԱՒՈՒԴ.

Նա կեցեա՞լ, որ ժողովուրդն իմ անկանի զխաապաստ ։

ՄԵԼՔՈԼ.

Այժ եկ, վայ իմն ահէ չըչուկ մարտին, մերձենայ ։

ՍԱՒՈՒԴ.

Ցաւեալթան . . եւ որդիք իմ փոխարինակք թողին զիս ։

ԱՐԵՆՆԵՐ

Որդիքն քո չփախեան, ոչ ոչ, առաջ, եղկելիք ։

ՍԱՒՈՒԴ.

Իմանամ, որդ զխաապաստ առհասարակ կան անկեալ ։

ՄԵԼՔՈԼ.

Արժանի զիս, իսկ եղբարքս . . .

ԱՐԵՆՆԵՐ

Ո՛չ, ոչ նա են քեզ որդեակք ։

ՍԱՒՈՒՂ

Զի՞նչ եւս այլ մընայ ինձ . դու միայն՝ դո՛ւստր , այլ ինձ ոչ . —
Իմ վաղուց ի սըրտիս է հաստատեալ զամենայն .
Եւ արդ ժամ է առասիկ : Վերջին հրաման է իմ այս ,
Աբեններ . արդ ըզդուստր իմ զայս յամուրս ուրեք տար :

ՄԵԼՔՈՂ

Մի՛ լիցի . հա՛յր , խիղըս ըզքեւ արկեալ վակժոյժ լինիցիմ .
Ընդդէմ օրիորդի՝ ոչ ձըգէ սուր թըշնամին :

ՍԱՒՈՒՂ

Ո՛հ դուստր . . արդ լուռ լեր . մի՛ շարժեր զիս յարտասուս .
Պարտեալ թագաւոր ոչ արտասուէ : Աբեններ ,
փրկեա զդա . իսկ թէ անկցի երբեք ի ձեռս ոսոխաց ,
Ազէ մի՛ ասեր ընաւ թէ դուստր իցէ Սաւուղայ ,
Այլ թէ հարսն է Դաւթի , եւ շուք դիցեն . երթ , թռիր :

ԱԲԵՆՆԵՐ

Թէ իցեմ ինչ բաւական , երդնում փրկել , այլ եւ զքեզ :

ՄԵԼՔՈՂ

Ազէ հա՛յր . ես ոչ կամիմ թողուլ ըզքեզ , քա՛ւ լիցի . . .

ՍԱՒՈՒՂ

Ես կամիմ . եւ տակաւին ես ինքնըս եմ թագաւոր :
Այլ զինուց մերձի շառինդ . աղէ սլացիր , Աբեններ ,
Եւ թէ հարկ իցէ՝ բըռնի եւս ըզդա ՚նդ քեզ քարշեսջիր :

ՄԵԼՔՈՂ

Իսկ արդ հա՛յր իմ յաւիտեան . . .

# ՏԵՍԻԼ Ե

## ՍԱՒՈՒՂ.

Ա՜խ որդեակք իմ․․ եղէ հայր։ —
Ահա դու միայն, արքայդ, եւ մի ոք ոչ մնաց քեզ
Յայնչափ սիրելեացդ եւ ծառայից։ — Գո՞հ իցես,
Անողորմն Աստուծոյ սարսափելի բարկութիւն։ —
Դու միաս ինձ, ով սուր, վերջին հարկիս պաշտպան մտերիմ.
Ո՛ն արդ եկ․ ահաւասիկ են գոռք Ժրպիրհ յաղթողին․
Տեսանեմ՝ զի յաչս իմ ջահք նոցին վառեալք՝ փայլակեն․
Եւ սուսերք նոցուն հազարք․ դու Ժանտաժուտ փղըշտացի,
Գտցես զիս, սակայն գոնէ արքայաբար աստ մեռեալ[1]։

---

1 Մինչդեռ նա զսուրն երթայ, հասանեն փղշտացիք ջահիւք եւ արիւնոտ սուսերօք. եւ ի դիմել նոցա գոչմամբ ի վերայ Սաւուղայ, անկանի վարագոյր տեսարանին։

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

[294.] 200
Կյուկա
1000
ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
901001000